

Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.


պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

14355-



1925

Պրոլետարիատ բոլոր յիշիների, միացե՛.

347

(6-78)

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
«ԳՅՈՒՂԱՑՈՒ ԴՐԱԴԱՐԱՆ»-Ի Հ Յ Յ (6)

ՀՈՂԱՅԻՆ ՈՐԵՆՍԳԻՐՔԸ

(1006
26389)

ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ՀԱՐՏ ՈՒ ՊԱՏԱԽԱՆԵՐՈՎ :

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ԱԶԽՈՏԱՎՈՐԱԿԱՆ ՀՈՂՈԴՏԱԴՈՐՁՈՒԹՅՈՒՆ

347

2-78

4418

Կազմեց՝ Խ. Ա.Վ.ԴԱԼ.ԲԵԿԲՈՅ

2001



17575-59



2010

ՅԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Խմբագրությամբ
Հոդժողկոմատի խմբ. կոլեգիայի

Ներկա աշխատությունը բռվանդակում է Հոդային
Որենսգրքի միայն առաջին մասը:

Հոդային Որենսգրքի այդ մասը հարց ու պատասխա-
նի ձեվով դնելով ընթեցողի առաջ, մենք հետապնդում
ենք յերեք նապատակի. —

1. Գյուղացիությանը յուրացնել տալ հողի նին (սեփ-
իականատիրական) իրավունքի հակա-աշխատավորական
յեվ հակա-հեղստիխական եռթյունը յեվ պատվասել
աշխատավորական հողոգտագործման իրավունքի նըսո-
րյունն ու նապատակահարմարությունը:

2. Հնարավորություն տալ անհատ հողոգտագործողին
սովորելու հոդային նոր հասարակության, ծխի յեվ ա-
ռանձին անդամի իրավունքներն ու պարտականություն-
ները: Այս ե, վոր կայուն պիտի դարձնի հողորգանների
աշխատանիքը զյուդում

յեվ 3. Յուրաքանչյուր զյուդացու ծանոքացնել հող-
ոգտագործման ձեվերի յեվ նաևնից ամեն մեկի առա-
վելությունների ու թերությունների հետ, վորպեսզի նա
տեղական պայմանների համաձայն նոր ձեվ ընտելու կա-
րողությունն ունենա: Առանց սրա դժվար է նուսպ, վոր
մեր զյուդը կազատագրվի համայնական հողոգտագործու-
թյունից յեվ կանցնի յավ ձեվերի:

Հոդային Որենսգրքի մյուս յերկու մասը մենք չենք

վեցրել, վորովինետեվ այդ մասերն ավելի մասնագիտական են յեվ նրանցով կրծանաբեռնվեր գրեուկը, վոր յուր նրանաբեռն քամու գուղացիական լայն զանգվածներին ծառայելու նպատակ ունի:

Հիշյալ մասերից յուրաքանչյուրը կարող է առանձին աշխատության նյութ դառնալ:

Ներկա աշխատությունը կազմելիս դեկավարվել են Տողային Արենսգրիով յեվ ոգտվել են Գյորօնի «Յամելին. Կոդեքս և վորոսահանություն» գրքից յեվ Հողմողկոմասի հրահանգներից, շշարեւականներից ու բացատրություններից:

Խ. Ա.

25 հոկտեմբերի 1924 թ.

Յերեվան

ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒԽՆՔՆԵՐ

ՀՌԴ. 1. Ծարական Թուսաստանում (այդպես և բոլոր բուրժվական յերկրներում) հողը մասնավոր սեփիականություն եր այնպես, ինչպես բերքը, անասունները, հագուստները և այլն:

Հողը մասնավոր սեփիականատիրություն յեղած ժամանակ այն կարելի յեր փողով գնել, ժառանգել, նվեր ստանալ և այլն: Աղքատ ու աշխատավոր ժողովուրդը վոչ փող ուներ հող գնելու և վոչ ել հարուստ ազգակցություն ուներ, վոր հողը ժառանգություն ստանար: Նվերներ ել տալիս եյին թագավորները, իշխաններն ու կալվածատերերը վոչ թե աշխատավոր գյուղացիությանը, այլ վանքերին, գեներալներին ու ազնվականներին:

Մասնավոր սեփիականության ժամանակ հողը կերակրում եր համ ձրիակեր կալվածատիրոջը, համ ել նրա վրա անմիջապես քրտինք թափող հողագործին, կալվածատերն ստանում եր հողի արդյունքի մեծ մասը: Մնացած չնշին մասով գյուղացին զոռով ու մեծ նեղությամբ կերակրում եր յուր ընտանիքին և ծածկում նրա մերկությունը: Ել հողը պարարտացնելու և արդյունավետ գարձնելու ուժի չեր մնում գյուղացու մոտ: Այդ պատճառով յերկրի հողերը տարեց տարի թուլանում ու անբերը եյին դառնում, իսկ աշխատավոր գյուղացիությունը աղքատանում ու թշվառանում եր:

Կերջապես հողի մասնավոր սեփիականատիրությունը

ճանաչում եր ամեն մի հողատիրոջ համար վորոշ սահման: Այդ սահմանի մի կողմում կարող ե չափազանց հողառատություն լինել, իսկ մյուս կողմում սակավահողությունից բնակչությունը կարող ե գոչ անհարժար լինել հարևանի համար, այդ միևնույն եր: Անհավասար, անարդար ու անհարժար սահմանը պաշտպանում ելին՝ ցարական կառավարությունը, նըրա չինովնիկները, դատարանները, զորքը և այլն:

Այս ամենին վերջ ե տվել մեր Հողային Որենսգիրքը:

Ում կողմից և յերբ ե ընդունված ու հրատարակված մեր Հողային Որենսգիրքը:

—Մեր Հողային Որենսգիրքն ընդունված ու հրատարակված ե Հայաստանի կենտրոնականի կողմից 1923 թ. սեպտ. 23-ին:

Ի՞նչ ե վորոշել հողի իրավունքի մասին Հողային Որենսգրքի առաջին հոդվածը:

—Հողային Որենսգրքի առաջին հոդվածը վորոշել ե, վոր Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության սահմաններում ընդունված վերացվում ե հողի մասնավոր սեփիականատիրության իրավունքը:

Հողային Որենսգիրքը ել ինչի վրայից և վերացրել մասնավոր սեփիականատիրության իրավունքը:

—Հողային Որենսգիրքը մասնավոր սեփիականատիրության իրավունքը վերացրել ե նաև կանատիրության իրավունքը վերացրել ե նաև ջրի, անտառի և հողի մեջ գտնվող հանքերի ու մետաղների վրայից:

ՀՈԴ. 2. Հողային Որենսգիրքը ում սեփիականությունն ե համարում յերկրի բոլոր հողերը:

—Հողային Որենսգիրքը Հայաստանի Հանրապետության սահմաններում գտնվող բոլոր հողերը համարում ե Բանվորա-Գյուղացիական պետության սեփիականություն:

ՀՈԴ. 3. Հանրապետության հողերի գլխավոր մասը վորըն ե կազմում:

—Հանրապետության հողերի գլխավոր մասը կազմում են այն ընդարձակ տարածությունները, վորոնք գյուղատնտեսական նշանակություն ունեն:

Վորոնք են գյուղատնտեսական նշանակություն ունեցող հողերը:

—Գյուղատնտեսական նշանակություն ունեցող հողերն են բոլոր վարելահողերը, խոտհարքները, արտավայրերը, դուրը, ճահճուները և այլն:

Իսկ վորոնք են գյուղատնտեսական նշանակություն չունեցող հողերը:

—Գյուղատնտեսական նշանակություն չունեցող հողերն են լեռնահանքերը, անտառները, լճերի ու գետերի բոնած տարածությունները, ժայռերն ու ապառաժները և այլն:

Ի՞նչ ե կազմվում գյուղատնտեսական նշանակություն ունեցող բոլոր հողերից:

—Գյուղատնտեսական նշանակություն ունեցող բոլոր հողերից կազմվում ե հանրապետության հողային միասնական ֆոնդը:

Ում տնօրինության տակ ե գտնվում պետական հողային միասնական ֆոնդը:

—Պետական հողային միասնական ֆոնդը գտնվում ե Հողժողկոմատի և նրա տեղական մարմինների տնօրինության տակ:

Ի՞նչով ե զեկավարվում Հողժողկոմատը պետական հողային միասնական ֆոնդի վիճակը վորոշելիս:

—Նա զեկավարվում ե Հողային Որենսգրքով և հանրապետության ուրիշ որենքներով:

ՀՈԴ. 4. Ո՞վ իրավունք ունի պետական հողային միասնական ֆոնդից անմիջապես ոգտվելու:

— Պետական հողային միասնական ֆոնդից անմիջականորեն ոգտվելու իրավունք ունեն աշխատավոր հողոգտագործողները, այսինքն նրանք, ովքեր իրենց ձեռքով են մշակում հողը:

Եւ ով իրավունք ունի մաս ստանալու այդ հողից:

— Պետական հողային միասնական ֆոնդից մաս ստանալու իրավունք ունեն քաղաքներն ու քաղաքատիպ վայրերը:

Դարձյալ ում ոգտագործությանը կարող են տրվել պետական միասնական ֆոնդի հողերից:

— Պետական միասնական ֆոնդի հողերը կարող են տրվել նաև պետական հիմնարկությունների ու ձեռնարկությունների ոգտագործությանը:

Հիշյալ հողոգտագործողների անմիջական ոգտագործությունից դուրս մնացող հողերն ինչ են լինում:

— Աշխատավոր հողոգտագործողների, քաղաքների և պետական կազմակերպությունների ոգտագործությունից դուրս մնացող ազատ հողերը յենթակա յեն Հողժողկոմատի անմիջական տնօրինությանը:

Ի՞նչ ե անում Հողժողկոմատն այդ հողերը:

— Հողժողկոմատն այդ հողերն առանձին պայմաններով տալիս ե հիմնարկությունների, կազմակերպությունների ու մասնավոր անհատների ոգտագործությանը:

ՀՈԴ. 5. Ի՞նչպես են կոչվում այն հողերը, վորոնք ազատ են մնում աշխատավոր հողոգտագործողների ու քաղաքների անմիջական պահանջը լրացնելուց հետո:

— Աշխատավոր հողոգտագործողներին ու քաղաքներին հողով բավարելուց հետո պետական միասնական ֆոնդի ամբողջ մնացորդը կոչվում է պետական հողային գույք:

Ում անմիջական տիրապետության տակ ե գտնվում պետական հողային գույքը:

— Պետական հողային գույքը գտնվում ե պետության անմիջական տիրապետության տակ: Ո՞վ ե կառավարում պետական հողային գույքը:

— Պետական հողային գույքը կառավարում ե Հողժողկոմատը:

ՀՈԴ. 6. Բացի պետական հողային գույքից հողային մարմինների ու հողային հասարակությունների արամագրության տակ կարող են լինել ազատ ուրիշ հողեր:

— Այս, կարող են լինել պահեստի, ինչպես և գեռ հասկացում չստացած ազատ ֆոնդի հողեր:

Ո՞վ ե սահմանում պահեստի և ազատ ֆոնդի հողերը հողոգտագործողներին հատկացնելու հերթականությունը, կարգն ու պայմանները սահմանում ե Հողժողկոմատը:

— Փահեստի և ազատ ֆոնդի հողերն ոգտագործողներին հատկացնելու հերթականությունը, կարգն ու պայմանները սահմանում ե Հողժողկոմատը:

Այդ պայմանները հանրապետության բոլոր մասերի համար նույնը պիտի լինեն:

— Վո՞չ, Հողժողկոմատը հիշալ պայմանները մշակելիս պետք ե նկատի ունենա զատ-զատ շրջանների տեղական առանձնահատկությունները:

ՀՈԴ. 7. Պետական հողային միասնական ֆոնդից ոգտագորդ հասարակությունները, քաղաքները, հիմնարկություններն ու անձերը պետության առաջ ինչ պարտավորություններ ունեն:

— Բոլոր հողոգտագործողներն իրենց տըրգած հողերը կանոնավոր ոգտագործելու խընդում պարտավոր են ճշտությամբ կատարել Հողային Որենսգրքի և հանրապետության ուրիշ որենքների բոլոր պահանջները:

Ո՞վ ե հսկում, վոր որենքների պահանջները ճշտությամբ իրազործվեն բոլոր հողոգտագործողների կողմից:

—Այդ հսկողությունը պիտի կատարեն հողային մարմինները:

ՀՈԴ. 8. Ինչով պիտի զեկավարվեն հողոգտագործողներն իրանց իրավունքների և պարտականությունների ճանաչման գործում:

—Բոլոր հողոգտագործողներն իրենց իրավունքների և պարտագորությունների հարցերում պետք ե զեկավարվեն Հողային Որենսգրքով:
Եւ ինչով պիտի զեկավարվեն նրանք:

—Պետք ե զեկավարվեն նաև հանրապետության ընդհանուր որենքներով:

Պարտադիր են հողոգտագործողների համար յեղած որենքները զարգացնող, բացատրող և պարզող հետագա վորոշումներն ու կարգադրությունները:

—Այս. հետագայում հրատարակվող բոլոր վորոշումներն ու կարգադրությունները ևս պարտադիր են հողոգտագործողների համար:

Բացի Հողային Որենսգրքից և գոյցություն ունեցող ուրիշ որենքներից ինչով կարող ե զեկավարվել հողային հասարակությունը յուր հողային գործերը կառավարելիս:

—Ամեն մի հողային հասարակություն, բացի հանրապետության որենքներից ու կարգադրություններից, կարող ե զեկավարվել նաև յուր կանոնադրությունով (համախոսական) ու տեղական սովորություններով, յեթե սրանց գործադրելը հակառակ չե որենքին:

ՄԱՍԻՆ ԱՌԱՋԻՆ

ԵՃԽՄԱՎԱՐՄԿԱՆ ՀՈՊԱԴՏԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

ՀՈՏՏՎԱԾ

ՀՈԴԻ ԱՃԽՄԱՎԱՐՄԿԱՆ ՈԳՏԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

ՀՈԴ. 9. Ո՞վ իրավունք ունի հողից ողտվելու:

—Գյուղական տնտեսություն վարելու համար հողից ողտվելու իրավունք ունեն Խորհրդային Հայաստանի բոլոր քաղաքացիները:

Ի՞նչ ե պահանջվում հողոգտագործող քաղաքացուց:

—Պահանջվում ե, վոր նա հողը մշակի յուր սեփհական աշխատանքով:

Որենքը զանազանություն դնում ե աշխատավոր հողոգտագործողների մեջ:

—Վնչ. աշխատավոր հողոգտագործողները՝ մանուկ թե ծեր, տղամարդ թե կին, քրիստոնյա թե վոչ քրիստոնյա, հայ թե սուսրազգի, հավասար իրավունք ունեն հողի վրա:

Նախկին կալվածատերները, հօգեվորականները և ուրանց նմանները հողից ողտվելու իրավունք ունեն:

—Ունեն, յեթե նրանք վերջնականապես ձեռք վերցնեն իրանց հին խայաթներից (բընույթ) և աշխատավոր հողոգտագործողների նըման հողը մշակեն սեփհական աշխատանքով:

Ոտարահպատակները հող ստանալու իրավունք ունեն Հայաստանում:

—Հողային Որենսգիրքը գրված ե միայն Խորհրդային հանրապետության քաղաքացիների համար, իսկ ստարահպատակները կարող են հող ստանալ բարձր մարմինների առանձին թույլացությամբ և առանձին պայմաններով:

Ո՞վ ե հող տալիս աշխատավոր հողոգտագործողներին:

—Նրանց հող տալիս են այն հողային հասարակությունները, վորոնց անդամն են իրանք:

Եւ ով կարող ե հող հատկացնել աշխատավոր հողոգտագործողներին:

—Նրանց հող կարող են հատկացնել նաև հողային մարմինները, յեթե ազատ կամ պահաստի հողեր կան:

ՀՈԴ. 10. Ի՞նչպես ե աշխատավորն իրագործում յուր իրավունքը ստացած հողի վրա:

— Նա այդ իրավունքն՝ իրագործում ե հողային հասարակության կազմի մեջ կամ թե չե առանձին, չմիանալով հողային հասարակության գործերին:

Այդ յերկու դեպքումն ել ով ե հսկում հողոգտագործողի վրա:

— Առաջին դեպքում հսկում ե հողային հասարակությունը, վորի բոլոր որինական վորոշումները պարտադիր են հողոգտագործողի համար: Իսկ առանձնացած հողոգտագործողի վրա հսկողություն ունեն միայն հողային մարմինները:

ՀՈԴ. 11. Ի՞նչքան ժամանակով ե տրվում հողի իրավունքը հողոգտագործողին:

— Աշխատավոր հողոգտագործողին հողը տըրպում ե մշտական և անստհմանափակ ժամանակով: Կարող ե հողոգտագործողը զրկվել հողից:

— Կարող ե զրկվել միայն որենքի ցույց տված դեպքում, վոր զրգած ե Հողային Որենսպեքի 17-րդ հօդվածում:

ՀՈԴ. 12. Ի՞նչ ձեռվ հողոգտագործողը կարող ե մըշտակել հողը:

— Աշխատավոր հողոգտագործողը կարող ե յուր բաժին հողերն առանձնացնել և մշակել հատվածային կամ ագարակային կարգով:

— Բացի այդ՝ նա կարող ե անդամ լինել մի հողային հասարակության և նրանից բաժին ըստացած հողամասերի վրա մշակություն տանել:

— Վերջապես հողոգտագործողը կարող ե միանալ յուր նմանների հետ և միասնաբար, իրու կոմմունա, արտել կամ հողագործական ընկերություն, մշակել հողի տեսքերը:

Վորոնք են հողի տարբեր տեսքերը:

— Հողի տեսքերն են՝ վարելահողը, խոտհարքը, արոտը, անտառը, ղուկը, ճահճուտները և այլն:

ՀՈԴ. 13. Կարելի յե աշխատավորական ոգտագործման հողը ծառայեցնել վոչ-գյուղական անտեսության արտադրության, որինակ՝ գործարան կառուցելու, ջրաղացիներու և այլն:

— Կարելի յե, դավհողբաժնից թույլտվություն ստանալուց հետո միայն:

ՀՈԴ. 14. Ո՞վ ե տալիս նոր հողամասերի իրավունք աշխատավորական հողոգտագործման համար:

— Նոր հողամասերի իրավունքը տալիս են՝
ա) հողային մարմինները և բ) հողային հասարակությունները:

ՀՈԴ. 15. Ի՞նչ կարգով են տալիս նոր հողամասերի ոգտագործման իրավունքը հողային հասարակությունները:

— Իրենց հողային կանոնադրության ցույց տված կարգով կամ առանձին համախոսականով:
Ի՞նչ կարգով են տալիս նոր հողամասերի ոգտագործման իրավունքը հողային մարմինները:

— Հողային մարմինները հողը տալիս են հողաշխարարական կանոնների համաձայն:

ՀՈԴ. 16. Ի՞նչ արտօնություն ե սահմանված ծխերի այն անդամների համար, վորոնք զինվորական ծառայության մեջ են կամ ընտրված են պետական—հասարակական պաշտոնի:

— Զինվորական ծառայության և ընտրովի պաշտոն վարելու ամբողջ ժամանակում նրանց բաժին հողը մնում է ծխի ոգտագործության տակ:

Վորն ե աշխատավորական վաստակի գնալը:

— Աշխատավորական վաստակի գնալն այն է, վոր ծխի անդամներից մեկը կամ մի քանիսը

գնում են ուրիշ տեղ բանվորության, վորապեսզի լրացնեն գյուղի տնտեսությամբ չփակվող իրենց ընտանիքի կարիքները:

Կամ արտօնություն աշխատավորական վաստակի գնացողների համար:

—Նրանց համար ել արտօնություն կա: Նըրանց բաժին հողը վեց տարի շաբունակ մնում է ծխի ոգտագործության տակ:

Յեթե վեց տարուց հետո չվերադառնան, նրանց հողերն ում կանցնեն:

—Կանցնեն հողային հասարակությանը:

Ի՞նչ պետք ե անել, յեթե աշխատավորական վաստակի գնացած հողոգտագործողը վերադառնա վեց տարին անցնելուց հետո:

—Պետք ե նրան բավարարել պահեստի հողերից. իսկ յեթե պահեստի հող չկա, ուշ վերադառնողը պետք ե բավարարվի ընդհանուր հիմունքներով հողերի վերաբաժանության ժամանակ:

Այլ տեղում սովորող աշակերտները և ուսանողները դրկին են հողից:

—Վնչ. քանի նրանք սովորում են, հողը մնում ե իրենց ծխի ոգտագործության տակ: Զրկվում են հողից վորբանոցներում գտնվող յերեխաները:

—Վնչ, նրանց հողերը պետք ե թողնել իրենց ծխի ոգտագործությանը:

Իսկ յեթե վորբանոցի յերեխան վորը ե և ծխի այլ անդամ չունի գյուղում:

—Գյուղում ծխի այլ անդամ չունեցող վորբերին հողային հասարակությունը բավարարում է նրանց գյուղ վերադառնալուց հետո առաջին իսկ հողաբաժանության ժամանակ: Յեթե վորը

չափահաս չե, նրա համար ընտրվում է խնամակալ:

ՀՈԴ. 17. Հողոգտագործողն ինչպիսի գեպքերումն ե կորցնում յուր հողի իրավունքը:

—Աշխատավոր հողոգտագործողի հողի իրավունքը կորչում և հետեւյալ դեպքերում:

ա) յերբ ծխի բոլոր անդամներն իրանց կամքով հրաժարվում են հողից՝ հեռանալու, առուտուրով կամ ուրիշ դործով զբաղվելու և այլ պատճառով,

բ) յերբ ծուխը դադարում է ինքնուրույն տնտեսություն վարելուց,

գ) յերբ ծուխը հանգչում է, այսինքն ծխի անդաման բոլոր անդամները մեռել են և այդ ծխից վոչ մեկը չկա, վոր նրա տնտեսությունը շարունակի:

դ) յերբ ծուխն ուրիշ տեղ է գաղթում և առաջկա տեղում ել տնտեսություն չե վարում,

յե) յերբ հողոգտագործողը դատարանի վըձուով զբակվում է հողից ոգտավելու իրավունքից

և կ) յերբ հողը որինական կարգով զբավկում ե պետական կամ հասարակական կարիքների համար. որինակ՝ յերկաթուղու, հանքերի մշակության, հիվանդանոցի, դպրոցի, բաղանիքի և այլն:

ՀՈԴ. 18. Հողի իրավունքից հրաժարվող ծուխն ինչպիսի պիտի կատարի յուր այդ վորոշումը:

—Ծխի բոլոր իրավազոր անդամները հողից հրաժարվելու մասին պիտի իրանց ստորագրությամբ հայտարարություն տան հողային հասարակությանը:

Ում պիտի հայտնել հողից հրաժարվելու մասին; յերբ հողը գտնվում է հասարակության սահմաններից դուրս:

—Պետք ե հայտնել գավառային հողբաժնին:

ՀՈՂ. 19. Վոր գեպքում ծուխը դադարած և համարվում ինքնուրուց գործելուց:

—Այն գեպքում, յերբ ծխի հողերը յերեք տարի շարունակ առանց հարգելի պատճառի չեն մշակվում նրա կողմից:

Ո՞վ և փորոշում ծխի դադարած լինելը ինքնուրուց տնտեսություն վարելուց:

—Հողային հանձնաժողովները, փորոնց առաջ շահագրգուված կողմն իրավունք ունի դուրս բերել վկաներ, փաստաթղթեր, ապացույցներ և այլն:

ՀՈՂ. 20. Ի՞նչ բան ե գաղթը:

—Գաղթն այն ե, վոր հողոգտագործողը յուր բնակավայրը փոխում ե և նոր տեղում հող ստանալով, տնտեսություն ե վարում:

Գաղթող ծուխը կարող է նախկին տեղում ևս տնտեսություն և հող ունենալ:

—Կարող ե այնքան ժամանակով միայն, վորքան վոր թույլ կը տան հողային մարմինները տեղափոխվողի՝ տնտեսությունը չթուլացնելու նպատակով:

ՀՈՂ. 21. Ի՞նչ կարգով ե կատարվում հողի գրավումը պետական կամ հասարակական կարիքների համար:

—Այդպիսի կարիքների համար հողի գրավումը կատարվում է Հողային Որենսությունը 166-րդ հոդվածի համաձայն:

ՀՈՂ. 22. Պետական կամ հասարակական պետքերի համար հողեր գրավելիս նրա ոգտագործողին տրվում ե վորոշ բավարարություն:

—Այս արվում ե հողի փոխարեն մի այլ տեղում հող, իսկ հողի վրա ունեցած շենքերի, տունկերի և այլ ծախսերի համար ել արվում ե հողոգտագործողին հասնող բոլոր վնասների հատուցումը:

Ծխի հողի իրավունքը վերև հիշված բոլոր գեպքերում դադարելուց հետո ուժ են անցնում նրա հողերը:

—Հողերն անցնում են հասարակությանը, իսկ յեթե հողերը հողային հասարակության սահմաններից դուրս են, անցնում են հողային մարմինների կարգադրությանը:

ՀՈՂ. 23. Հողոգտագործողն ի՞նչ անելու իրավունք ունի յուր հողաբաժնի վրա:

—Նա իրավունք ունի յուր հողաբաժնը մըշակելու այնպես, ինչպես վոր ինքն ե կամենում: Իրավունք ունի հողոգտագործողը յուր հողաբաժնի վրա տներ շինելու, այդի ունկելու և այն:

—Հողոգտագործողն ազատ իրավունք ունի յուր հողաբաժնի վրա շենքեր կանգնեցնելու, այդի ու պարտեզ տնկելու:

Հողը մշակելու, շենքեր շինելու, այդի ու պարտեզ տնկելու, ժամանակակից հողոգտագործողն ի՞նչ անելու իրավունք չունի:

—Հողոգտագործողն իրավունք չունի յուր հողաբաժնի վրա են տեսքի բան շնորհու, վոր կը խանդարի, արգելք կըդաֆանա կամ մասն կը քերերի հարևաններին:

ՀՈՂ. 24. Ո՞ւմն են պատկանում Հողոգտագործողի հողաբաժնի վրա ունեցած շենքերը, տունկերը և այլն:

—Այդ բոլորը պատկանում են իրեն Հողոգտագործողին:

Իրավունք կտ ուրիշին տալու այն հողային մասները, վորոնց վրա հողոգտագործողն ունի տուն, այդի, պարտեզ, ծառաստան և այլն:

—Վո՞չ. շենքերով, այգիներով, պարտեզներով ծածկված հողամասերը պիտի թողնել ախրով ոգտագործությանը:

Շենքերով ու այգիներով պատած հողամասը կարող է ուրիշին տրվել հարացինապարության ժամանակ կամ

ՀՈԴ. 19. Վոր դեպքում ծուխը դադարած և համար-
վում ինքնուրույն գործելուց:

—Այն դեպքում, յերբ ծիփ հողերը յերեք
տարի շարունակ առանց հարգելի պատճառի չեն
մշակվում նրա կողմից:

**Ո՞Վ Ե ՎՈՐՈՂՈՒՄ ԾԻՓԻ ԴԱԴԱՐԱԾ ԼԻՆԵԼԸ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ
ՄՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ ՎԱՐԵԼՈՒՑ:**

—Հողային հանձնաժողովները, վորոնց ա-
ռաջ շահագրգուված կողմն իրավունք ունի գուրս
բերել վկաներ, փաստաթղթեր, ապացույցներ և
այլն:

ՀՈԴ. 20. Ի՞նչ բան ե գաղթը:

—Գաղթն այն է, զոր հողսգտագործողը
յուր բնակավայրը փոխում է և նոր տեղում հող
ստանալով, տնտեսություն ե վարում:

Դադիթող ծուխը կարող է նախկին տեղում ևս անտե-
սություն և հող ունենալ:

—Կարող ե այնքան ժամանակով միայն,
վորքան վոր թույլ կը տան հողային մարմինները
տեղափոխվողի անտեսությունը չթուլացնելու
նպատակով:

**ՀՈԴ. 21. Ի՞նչ կարգով ե կատարվում հողի զրավու-
մը պետական կամ հասարակական կարիքների համար:**

—Այդպիսի կարիքների համար հողի գրա-
վումը կատարվում է Հողային Ռենսորքի 166-րդ
հոդվածի համաձայն:

**ՀՈԴ. 22. Պետական կամ հասարակական պետքերի
համար հողեր գրավելիս նրա ոգտագործողին տրվում ե
վորոշ բավարարություն:**

—Այս. արվում ե հողի փոխարեն մի այլ
տեղում հող, իսկ հողի վրա ունեցած շենքերի,
տունկերի և այլ ծախսերի համար ել տրվում ե
հոդողագործողին համար բոլոր վնասների հա-
տուցումը:

Ծխի հողի իրավունքը վերև հիշված բոլոր գեպքերում
դադարելուց հետո ուժ են անցնում նրա հողերը:

—Հողերն անցնում են հասարակությանը,
իսկ յեթե հողերը հողային հասարակության սահ-
մաններից դուրս են, անցնում են հողային մար-
մինների կարգադրությանը:

**ՀՈԴ. 23. Հողոգտագործողն ի՞նչ անելու իրավունք
ունի յուր հողաբաժնի վրա:**

—Նա իրավունք ունի յուր հողաբաժնը մը-
շակելու այնպես, ինչպես վոր ինքն և կամենում:
իրավունք ունի հողոգտագործողը յուր հողաբաժնի
վրա աներ շինելու, այդի տնկելու և այլն:

—Հողոգտագործողն ազատ իրավունք ունի
յուր հողաբաժնի վրա շենքեր կանգնեցնելու, այ-
դի ու պարտեզ տնկելու:

Հողը մշակելու, շենքեր շինելու, այդի ու պարտեզ
տնկելու ժամանակ հողոգտագործողն ի՞նչ անելու իրա-
վունք չունի:

—Հողոգտագործողն իրավունք չունի յուր
հողաբաժնի վրա են տեսակը, բնույթը, վոր կը
խանդարի, արգելք կը դառնա կամ մնա, ինքերի
հարեւաններին:


**ՀՈԴ. 24. Ո՞ւմ են պատկանում Հողոգտագործողի
հողաբաժնի վրա ունեցած շենքերը, տունկերը և այլն:**

—Այդ բոլորը պատկանում են իրեն՝ հողոգ-
տագործողին:

իրավունք կամ ուրիշին տալու այն հոդամաները, վո-
րոնց վրա հողոգտագործողն ունի տուն, այդի, պարտեզ,
ծառաստան և այլն:

—Վո՞չ, շենքերով, այգիներով, պարտեզե-
րով ծածկված հողամասերը պիտի թողնել ափ-
բո՞չ ոգտագործությանը:

Շենքերով ու այգիներով պատած հողամասը կարող
ե ուրիշին տրվել հաղափնարարության ժամանակ կամ



դրավկել պետական ու հասարակական կարիքների համար:
—Այս. կարող ե տրվել և կարող ե գը-
րավկել:

Ի՞նչ բավարարություն ե ստանում այդ դեպքում
շենքերի և այդու տերը:

—Նա ստանում ե շենքերի և տունկերի իս-
կական արժեքը:

Ում պիտի դիմի շենքերի և տունկերի տերը, յեթե
նրան չեն վճարում իրա վնասների արժեքը:

—Պետք ե դիմի հողային հանձնաժողովին:

Իրավունք ունի հողոգտագործողը ծախելու իրա շեն-
քերը, այդին, ծառաստանը և այլն:

—Իրավունք ունի ծախելու այն ամենը,
վոր կարելի յե բաժանել հողից: Որինակ՝ կարե-
լի յե ծախել շենքերի քարն ու հողը և այդիների
ծառերն ու տունկերը (կտրելու կամ հանելու
համար):

Կարող ե հողոգտագործողը փոխել իրա այդին մեկ
ուրիշի ազատ հողամասի հետ:

—Այդին ազատ հողամասի հետ կարելի յե
փոխել, յեթե յերկուսի տարածությունը նույն է:
Պահանջման ե փոխելու դեպքում վորեւ թույլտվու-
թյուն:

—Այս. պետք ե ստանալ թույլտվություն
դաշնողբաժնից:

Իրավունք ունի իրան շենքերն ու այդիները ծախե-
լու հողից կամովին հրաժարվողը կամ այլ տեղ գաղթողը:

—Հողից կամովին հրաժարվողները կամ
գաղթողներն իրավունք ունեն ծախելու իրենց
տներն ու այդին:

Ում պետք ե դիմեն հողից կամովին հրաժարվողնե-
րըն ու գաղթողներն իրենց շենքերն ու այդիները ծախե-
լու թույլտվություն ստանալու համար:

—Պետք ե դիմեն հողմովկոմատին:

Իրավունք ունի հողոգտագործողը մի ուրիշ դյուզում

ՀՊԴ. 26. Հողի պետականացումը հաստատ պահելու
և հողը կրկին կուլակների ձեռքում չկենարունացնելու հա-
մար ինչ արգելք ե դնում Հողային Որենսգիրքը:

—Հողային Որենսգիրքն արգելում ե հողը
գնելը, ծախելը, նվիրելը, կտակելը և գրավ դնելը:

Իսկ յեթե մեկն ուշադրության շառնի կամ չիմանա
Հողային Որենսգրքի այդ պահանջները և կտարի արգել-
ված գործարքը:

—Այդ դեպքում առուծախսը, նվիրելը, կը-
տակելը և գրավ դնելը կըհամարվի չեղյալ և ան-
վավեր, յեթե մինչեւ անդամ ծախսված լինի շատ
մեծ գումար:

Ել ինչ պատճի կարժանանա հողը գնողը, ծախողը,
նվիրողը, կտակողը կամ գրավ դնողը:

—Այդ կտարողը կը զրկվի յուր ոգտա-
գործության տակ գնվող հողից:

Ուրիշ ինչ պատճի ե սահմանված հողի պետականաց-
ման որենքը խախտողի համար:

—Հողի պետականացման որենքը խախտողը
կենթարկվի նաև քրեական պատճի ժողովաս-
րանի միջոցով, իբրև պետության մենաշնորհի
որենքը խախտողի:

յեթե հողային մարմինները չեն բավարարում
նրանց:

Ի՞նչ խնդրելու իրավունք ունեն հողային հանձնաժո-
ղովներից բողոքատուները (հայցվոր):

—Իրավունք ունեն խնդրելու, վոր մինչեւ
գործի քննվելը վերականգնվի իրենց խախտված
իրավունքը հողի վրա:

ՀԱՏՎԱԾ 11

ՀՈՂԻ ԱԶԽԱՏԱՎՈՐՄԿԵՆՆ ՎԱՐՉՈՎԿԱԼՈՒԹՅՈՒՆ
 (ԱՇԽԱՏԱՎՈՐՄԿԵՆՆ ՈԴՏԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՀՈՂԻ ԻՐԱՎՈՒՅՑՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՓՈԽԱՆՑՈՒՄԸ)

ՀՈՂ. 27. Ի՞նչ եւ վարձակալությունը:

—Հողի աշխատավորական վարձակալությունն այն ե, զոր յուր աշխատանքով հողեր մըշակող ծուխը դրամով, մթերքով կամ մի ուրիշ վարձով վերցնում ե մշակելու համար հող այնպիսի հողոգտագործողից, վորն ինքը հնարավորություն չունի մշակելու այն:

Ո՞վ իրավունք ունի յուր հողաբաժինը վարձով տալու:

—Այն հողոգտագործողը, վոր չուրության, կարկտի, ժանատախի և այլ դժբախտության պատճառով ուժից ընկել ե և չի կարող յուր հողը մշակել:

Եղ ով իրավունք ունի հողաբաժինը վարձակալության տալու:

—Լծկանի, սերմացուի, գործիքների պակասություն ունեցող հողոգտագործողները:

Ուրիշ ի՞նչ գեպքում ծուխը կարող ե հողաբաժինը վարձակալության տալ:

—Ծուխը կարող ե յուր հողաբաժինը վարձակալության տալ նաև հետեյալ գեպքերում.—

ա) յերբ աշխատավոր ձեռքը վախճանվել ե,

բ) յերբ աշխատավոր ձեռքը ծառայում ե բանակում,

գ) յերբ աշխատավոր ձեռքն ընտրովի պաշտօն ե վարում և կամ գնացել ե աշխատավորական վաստակի:

ՀՈՂ. 28. Քանի տարով կարելի յէ հողաբաժինը վարձակալության տալ:

—Վհաչ ավելի յերեք տարի ժամանակից:

ՀՈՂ. 29. Կարելի յէ հողը վարձակալության տալու յերեք տարի ժամանակն ավելացնել:

—Բացառիկ գեպքերում և գալառակային գործկոմի թույլտվությամբ՝ ժամանակը կարելի յէ հասցնել մինչև 6 տարվա:

Իսկ յեթե այդ նոր ժամանակը լրանալուց հետո յել ծուխը չկարողանամ ինքը մշակել հողը:

—Պետք ե խնդրել գավհողբաժնից, վորպեսզի թույլ տրվի նրանց հողը վարձակալության տալ:

Ի՞նչ կինի, յեթե այդ թույլտվությունը չստացվի:

—Յերբ հողային մարմիններն ել հնարավոր չեն համարում թույլ տալ հողը նորից վարձակալության տալու, այն ժամանակ հողը դառնում ե գյուղական պահեստ և ընդհանուր կարգով տրվում ե ուրիշին մշակելու:

ՀՈՂ. 30. Ո՞վ իրավունք չունի հողը վարձակալության վերցնելու:

—Նա, ով վոր վերցրած հողը յուր ունեցածի հետ միասին ինքն իրա ուժերով մշակել չի կարող:

ՀՈՂ. 31. Հողի վարձակալության պայմանն որինական ուժի մեջ դնելու համար ի՞նչ պետք ե անել:

—Պետք ե պայմանը մատյան անցկացնել, տոմարագրել տալ:

Վճրտեղ պետք ե տոմարագրվի հողի վարձակալության պայմանը:

—Յեթե վարձակալության ե տրվում ծխի հողերի մի մասը միայն, վարձակալության պայմանը պետք ե տոմարագրվի գյուղխորհրդի մոտ: Իսկ վճրտեղ պետք ե տոմարագրվի պայմանը, յերբ

ծխի բոլոր հողերն են վարձակալության արվում:

—Նման դեպքերում պայմանագիրը պիտի տոմարագրվի գավառակային գործկոմում:

Գյուղխորհուրդն ու գավառակային գործկոմն իրավունք ունեն մերժելու հողի վարձակալության պայմանի տոմարագրությունը:

—Այս. իրավունք ունեն մերժելու են ժամանակ, յերբ հողը վարձով և տալիս այնպիսի հողոգտագործող, վոր յուր ուժով հողը մշակելու հնար ունի:

Ե՞լ յերբ կարող ե տոմարագրությունը մերժվել:

—Մեկ ել այն ժամանակ, յերբ վերցնողը հնար չունի յուր ուժով մշակելու հողը և պետք ե ուրիշի աշխատանքը շահագործի:

ՀՈԴ. 32. Կարելի յե հողի աշխատավորական վարձակալության պայմանը բերանացի անել:

—Կարելի յե. պետք ե պայմանները բերանացի հայտնել գյուղվորհներին կամ գավառակային գործկոմին: Սրանք այդ պայմանները պարտավոր են գրել տալ իրենց մոտ յեղած տոմարագրության մատյանում:

ՀՈԴ. 33. Ո՞վ բոլորովին իրավունք չունի հողը վարձու տալու:

—Այն ծխերն իրավունք չունեն հողը վարձով տալու, վոր ուրիշ տեղում ապրելու կամ ուրիշ գործով զբաղվելու պատճառով ել գյուղում իրենց ինքնուրույն ուժով անտեսություն չեն վարում:

ՀՈԴ. 34. Ի՞նչ պարտավորություններ են դրվում հողի վարձակալի վրա, բացի փորոշված վարձագինը տալուց:

—Վարձակալը պարտավոր ե հողը մշակել և ամեն կողմից պահել հալալ ու աշխատասեր ունչարի նման: Նա պետք ե հողամասի առուները լավ՝ պահի, պաշտպանի սելավներից, հողը չհոգնեցնի և այլն:

Ե՞լ ինչ պարտավորություն ունի հողի վարձակալը:

—Նա պետք ե վճարի վարձու հողի վրա ընկնող բոլոր հարկերն ու տուրքերը:

Ի՞նչ անելու իրավունք չունի հողի վարձակալը:

—Նա իրավունք չունի վերցրած հողը յուր կողմից ուրիշին վարձու տալու:

ՀՈԴ. 35. Կարող ե հողի վարձակալության պայմանը քանդվել ժամանակից առաջ:

—Այս. կարող ե քանդվել, յեթե վարձակալը չկատարի 34. ըդ հոդվածի պահանջներից մեկը:

Ում պահանջով կարող ե հողի վարձակալության պայմանը քանդվել:

—Հողը վարձով ավողի և կամ հողային մարմիններից մեկի պահանջով:

ՀՈԴ. 36. Պայմանաժամից հետո հողի հետ միասին վերադարձնում ե հողոգտագործողին նաև հողի վրա կատարված բարեկարգությունները՝ տնկած ծառերը, պատրաստած շենքերը, պատերը և այլն:

—Այն բոլորը, ինչ հողից առանց վնասի բաժանել ու վերցնել չի կարելի, մնում ե հոդովագործողին:

Տրվում ե վարձակալին վորոշ վարձատրություն կատարած բարեկարգությունների համար:

—Բոլոր դեպքերում հողոգտագործողի և վարձակալի հաշվետվությունը կատարվում ե յերկուսի մեջ կնքված և տոմարագրության յենթարկված պայմանի համաձայն:

ՀՈԴ. 37. Ում պետք ե դիմել հողի վարձակալության պայմանը քանդելու համար կամ պայմանը խախտելու դեպքում:

—Դիմել դիմել հողային հանձնաժողովին: Պայմանագիրը քանդելուց առաջացող վեճերը՝ բերքի, վարձագնի և ուրիշ հարցերի մասին ով պետք ե լուծի:

— Հողային հանձնաժողովները:

Ո՞վ պիտի քանդի այն պայմանագրերը, վորոնք իրենց մեջ ունեն կողմերից մեկի համար խեղդող, սորկացնող և տուն քանդող կետեր:

— Այդպիսի պայմանագրերը քանդելու հարցը պետք է քննի դատարանը, վորովհետև նըանց մեջ կա նաև քրեական հանցանք:

ՀԱՏՎԱԾ III

ՈԺԱՆԴԱԿ ՎԱՐՉՈՒ ԱՇԽԱՏԱՆՔՆ ԱՇԽԱՏԱՎՈՐԱԿԱՆ
ՀՈՂԱԳՈՐԾՎԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵՋ

ՀՊԴ. 38. Ցերբ կարելի յե վարձու աշխատավոր (բանվոր կամ ծառա) բանեցնել գյուղական աշխատավորական տնտեսության մեջ:

— Գյուղական աշխատավորական տնտեսության մեջ վարձու աշխատավոր կարելի յե բանեցնել են ժամանակ, յերբ ծուխը յուր աշխատավոր ձեռքով հնարավորություն չունի ժամանակին կատարելու գյուղատնտեսական հարկավոր աշխատանքները:

Ի՞նչ պատճառով ծուխը կարող է զրկվել տնտեսության բոլոր աշխատանքները ժամանակին կատարելու հընարավորությունից:

— Աշխատավոր ձեռքերի պակասության, ծըլի անդամների հիվանդության, զինվորության կամ ընտրովի պաշտոնի զնալու, կնոջ հղի լինելու կամ մանկահասակ յերեխաներ ունենալու և նման ուրիշ պատճառներով:

— Բացի այդ, ծուխը կարող է զրկվել տընտեսության բոլոր աշխատանքները յուր ուժով կատարելու հնարավորությունից՝ գյուղատնտեսական կարգ ու սարք չունենալու պատճառով:

ՀՊԴ. 39. Ի՞նչ ե պահանջվում գյուղական տնտեսության մեջ վարձու աշխատավոր բանեցնող ծուխից:

— Պահանջվում ե, վոր ծխի աշխատավորական ամբողջ կազմը գործի:

Իսկ ի՞նչ ե նշանակում այդ:

— Այդ նշանակում ե, վոր ծխի աշխատանքի ընդունակ բոլոր անդամները վարձվորների հետ միասին հավասար չափով պետք է մասնակցեն տնտեսության աշխատանքներին:

ՀՊԴ. 40. Ի՞նչ պայմանով ե թույլատրվում վարձու աշխատանքը գյուղական տնտեսության մեջ:

— Թույլատրվում ե ամեն պայմանով, վոր ծիշտ կերպով կտարարվեն աշխատանքի պաշտպանության, աշխատավարձի և ուրիշ կարգ ու կանոնների մասին հրատարակված որենքները:

Կան այդ մասին որենքներ մասնավորապես գյուղական տնտեսության համար:

— Այդպիսի որենքներ կան և կը հրատարակեն Աշխատանքի ժողովրդական կոմիսարիատի կողմից, վորը պետք է այդ հարցում համաձայնության գա չողժողկոմատի և Արհեստակցական Միության Խորհրդի հետ:

Վերոնք են Արհեստակցական միությունները:

— Արհեստակցական միությունները բաղադրի և գյուղի բանվորներին կազմակերպող և նըրանց շահերը պաշտպանող մարմիններն են:

Ո՞վ պիտի հսկի և հետեւի, վոր գյուղումն ել չխախտըվեն աշխատանքի պաշտպանության որենքներն ու կարգ կանոնը:

— Աշխատանքի ժողովրդական կոմիսարիատը:

ՀԱՏՎԱԾ IV

ՀՊԱՅԻՆ ՀԱՍՏՐԱԿՈՒԹՅՈՒՆ

(ՀՈՂՈՔՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ ՀԱՍՏՐԱԿՈՒԹՅՈՒՆ)

ԳԼՈՒԽ Ա.

ՀՊԱՅԻՆ ՀԱՍՏՐԱԿՈՒԹՅՈՒՆ ԿԱԶՄԸ

ՀԱԴ. 41. Ի՞նչ ե հողային հասարակությունը:

—Հողային հասարակությունը հանդի ընդհանուր ոգտագործություն ունեցող ծխերի խըժքակցությունն է:

Բացի յեղածներից, ել վորոնք են համարվում հողային հասարակություն:

—Հողային հասարակություն են նաև գյուղատնտեսական կոմմունաներն ու արտելները:

ՅԵՐԵ կոմմունան ու արտելը չեն ճանաչվի, վորպես հողային հասարակություն:

—ՅԵՐԵ վոր նրանք իրենց կազմի մեջ ունենան 15-ից պակաս աշխատավոր ձեռքեր:

ԵԼ ովքեր են համարվում հողային հասարակություն:

—Նախկին հասարակություններից հողերով բաժանված շնչերը:

ՀԱԴ. 42. Ի՞նչն է տարբերվում հողային հասարակությունը սովորական գյուղից:

—Հողային հասարակությունը տարբերվում է գյուղից նրանով, վոր հողային հասարակությունը ծխերի անտեսական հողային միություն է, իսկ գյուղը՝ վարչական:

Կարմաղ ե գյուղում ապրողը հողային հասարակության անդամ չլինել:

—Այս գյուղում որինական ճանապարհով հող չստացած վերաբնակիչները հողային հասա-

րակության անդամ չեն, յեթե մինչեւ անգամ տուն և տնատեղ ունենան գյուղում: Սրանք հողային հասարակության ընդհանուր ժողովներում ձայնի իրավունք չունեն:

Կարմաղ ե նույն գյուղում լինել մի քանի հողային հասարակություն:

—Այս հողոգտագործողների մի մասը կտրող ե ունենալ համայնական, իսկ մյուս մասը՝ ընկերական հողոգտագործություն և այլն:

—Մի քանի գյուղեր կամ գյուղերի մասերը կարող են միանալ և մի հողային հասարակություն կազմել՝ իրենց ունեցած հիմնական հանդից գուրս, միացյալ հանդ ոգտագործելու համար (որինակ՝ ամառային և ձմեռային արոտատեղիների միացյալ ոգտագործությունը):

ՀԱԴ. 43. Հիմնական հողերից գուրս հողի ոժանդակատեսքից (խոտհարք և ամառային, ձմեռային արոտավայր) ոգտագող ծխերն ինչպես են վարում իրենց գործերն այդ հողերի նկատմամբ:

—Նրանք այդ հողերի նկատմամբ համարվում են առանձին հողային հասարակություն և այդպես ել կառավարում են իրենց հողային գործերը ընդհանուր ժողովի և լիազորների միջոցով:

ՀԱԴ. 44. Իրավունք ունեն մի քանի հողային հասարակություններ միանալու:

—Մի քանի հողային հասարակություններ իրավունք ունեն միացյալ հողային հասարակություն կազմելու:

Ի՞նչ նպատակով կարող ե մի քանիսից միացյալ հողային հասարակություն ստեղծվել:

—Մի քանի հողային հասարակություններ կարող են միանալ գյուղատնտեսական կարևոր ու մեծ գործեր գլուխ բերելու համար:

ՀՈԴ. 45. Ինչպես կարող ե հողագուրկ նոր ծուխը
անդամ դառնալ հողային հասարակության:

—Նոր ծուխը հող ստանալու իրավունքով
կարող ե անդամագրվել հողային հասարակու-
թյան՝ այդ նույն հասարակության համաձայնու-
թյամբ ու թույլտվությամբ:

Յեթե հողային հասարակությունն ավելի հող ունի,
այդ դեպքում ել և պահանջվում նրա համաձայնությունը:

—Վա՞չ. ավելի հողեր ունեցող հասարակու-
թյուններին նոր ծուխ կարելի յե անդամագրել,
յեթե մինչև անդամ հասարակությունը համա-
ձայն չե դրան:

Ում կարգադրությամբ նոր ծուխ կարելի յե ան-
դամագրել ավելի հող ունեցող հասարակություններին:

—Հողային մարմինների կարգադրությամբ:
Իրավունք ունեն հողային մարմինները նոր ծխեր
անդամագրելու փոխարեն, հասարակության ավելի հողերը
կտրելու և զատելու:

—Հարևան գյուղերի հետ հողաշխնարարական
կարգով հասարակության սահմանները պարզե-
լուց և վերջնականապես վրացելուց հետո, այդ
սահմանների մեջ ընկնող հողերի ավելացածը հո-
ղային մարմիններն իրավունք չունեն կտրելու
կամ զատելու:

Հապա ինչ պիտի անեն հողային մարմինները ավելա-
ցած հողերի հետ:

—Նրանք այդ ավելի հողերի չափով կարող
են պարտադիր կարգով նոր ծխեր անդամագրել
հասարակությանը, իսկ այդ չկատարվելու դեպ-
քում ավելի հողերը մնում են հասարակության
արամագրության և ոգտագործության տակ:

ՀՈԴ. 46. Ովքե՞ր են համարվում հողային հասարա-
կության անդամ:

—Հողային հասարակության անդամ հա-

մարգում են նրա կազմի մեջ մտնող ծխերի բո-
լոր անդամները, առանց սեռի և հասակի տար-
բերության:

Իսկ ովքե՞ր են համարվում հասարակության իրավա-
գոր (ձայն ունեցող) անդամ:

—Հողային հասարակության իրավագոր ան-
դամ համարվում ե, անկախ սեռից, 18 տարին
լրացած անդամները:

Կարող ե 18 տարին չլրացած անձը լինել հասարա-
կության իրավագոր անդամ:

—Ինքնուրույն անտեսություն վարող տան
գլուխները կարող են հասարակության իրավա-
գոր անդամ լինել, յեթե նույնիսկ նրանց տարի-
քը 18.ից պակաս ե:

ՀՈԴ. 47. Ինչպես և կարգավորում և կառավարում
հասարակությունը յուր հողային բոլոր գործերը:

—Հողային հասարակությունը յուր բոլոր
հողային գործերը կարգավորում ու կառավա-
րում ե հատուկ կանոնադրությամբ և կամ ա-
ռանձին համախոսականների հիման վրա:

Ինչպես պետք ե կազմվեն հասարակության կանո-
նադրություններն ու համախոսականները պետք ե կազ-
մվեն Հողային Որենսգրքի և ուրիշ որենքների
բոլոր պահանջների համաձայն:

—Հողային հասարակության կանոնադրու-
թյուններն ու համախոսականները պետք ե կազ-
մվեն Հողային Որենսգրքի և ուրիշ որենքների
բոլոր պահանջների համաձայն:

ՀՈԴ. 48. Ցերե ե հողային նոր հասարակությունը ճա-
նաչվում իբրև որինական կազմակերպություն:

—Նոր կազմվող հողային հասարակությու-
նը որինական ե համարվում, յերբ պահանջված
ձևով տոմարագրության և յենթարկվում:

Մի անդամ տոմարագրվելուց հետո, հողային հասա-
րակությունը կարող ե փոփոխություն կը ել:

—Հողային հասարակությունը միշտ կարող ե

փոփոխություն կրել, սակայն նա պարտավոր և
տոմարագրության յենթարկել նաև այդ փոփո-
խությունները:

Ո՞վ ե հաստատում տոմարագրության կարգն ու ժա-
մանակը:

—Այդ կատարում և չողմողկումատը:

ԳԼՈՒԽ Բ.

ՀՈՂԱՑԻՆ ՀԱՍՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՌԱՎԱՐՈՂ ՈՐ-
ԳԱՆՆԵՐԸ

ՀՈՂ. 49. Ո՞վ ե կառավարում հողային հասարակու-
թյան գործերը:

—Հողային հասարակության գործերը կա-
ռավարում ե նրա ընդհանուր ժողովը:

Ել ով ե գարում հողային հասարակության գործերը:

—Հողային հասարակության գործերը վա-
րում ե ընդհանուր ժողովի կողմից ընտրված
մարմինը:

Ո՞վ ե կառավարում գործերն այն վայրերում, վոր-
տեղ հողային հասարակության և գյուղի սահմանները
նույնն են:

—Այդպիսի վայրերում ընտրովի մարմիննե-
րի տեղը հողային հասարակության գործերը կա-
ռավարում են գյուղխորհուրդները:

Հողային հասարակության և գյուղի սահմանները
նույնը չինելու դեպքում ինչպես ե լինում:

—Այդ դեպքում հողային հասարակությու-
նը հատուկ լիազորներ ե ընտրում:

ՀՈՂ. 50. Ի՞նչ հարցեր ե լուծում հողային հասարա-
կության ընդհանուր ժողովը:

—Ընդհանուր ժողովը լուծում ե հողային
հասարակության վերաբերյալ հարցերը:
Վորոնք են այդ հարցերը:

—Այդ հարցերն են՝

ա) Ընդհանուր ժողովը սահմանում և փո-
փոխում ե հասարակության հողերի տարբեր
տեսքերի ոգտագործության կարգը.

բ) Ընդհանուր ժողովը կազմում և հողային
կանոնադրություն և հարկ յեղած դեպքում փո-
փոխում ու լրացնում ե այն.

շ) Ընդհանուր ժողովը վճռում և դրսից նոր
հողոգտագործողների հասարակության անդամա-
գութելու և նրա կազմից հողով գատվելու դի-
մումները.

դ) Ընդհանուր ժողովը վորոշումն ե տալիս
հողաշինարարության, լայնագաշտ մշակության
անցնելու, ագարակներ և հողահատվածներ կազ-
մելու, հասարակության մասերի մեջ հողերը բա-
ժանելու և այլ խնդիրների մասին.

յե) Ընդհանուր ժողովը, հողի ոգտագործման
սահմանված կարգի համաձայն՝ կատարում ե հո-
ղերի վերաբաժանություն և հողաբաշխություն.

զ) Ընդհանուր ժողովը ցրված հողամասերով
հողոգտագործման դեպքում վորոշում ե ընդհա-
նուր սերմնափոխության, ընդհանուր արոտի և
այլ հարցերը.

ե) Ընդհանուր ժողովը տնօրինում ե ընդ-
հանուր ոգտագործության տակ գտնվող հողա-
տեսքերի և ազատ հողամասերի մասին

և ը) վերջապես Ընդհանուր ժողովն ընտ-
րում ե լիազորներ (նախորդ հողվածի ծանո-
թության համաձայն) և սահմանում նրանց վրա
հակելու կարգը:

ՀՈՂ. 51. Ովքեր են մասնակցում հասարակության
ընդհանուր ժողովին:

—Հողային հասարակության ընդհանուր ժո-
ղովին մասնակցում են 18 տարին լրացած բո-

լոր անդամները, առանց սեռի խարության: Իրավունք ունեն 18-ից պակաս տարիք՝ ունեցողները մասնակցելու հասարակության ընդհանուր ժողովին:

— 18-ից պակաս տարիք ունեցող այն անդամներն իրավունք ունեն մասնակցելու ընդհանուր ժողովին, ովքեր ինքնուրույն տնտեսություն վարող տան գլուխներ են:

ՀՈԴ. 52. ՅԵՐԲ և ընդհանուր ժողովն որինական:

— Հողային հասարակության ընդհանուր ժողովն որինական ե այն ժամանակ, յերբ ներկա յեն բոլոր ծխերի կեսի տան գլուխները կամ նրանց ներկայացուցիչները:

Հողոգտագործման կարգը փոխելու դեպքում ի՞նչ թիվ պետք ե ներկա լինի ընդհանուր ժողովին:

— Այդ դեպքում հասարակության ընդհանուր ժողովում պետք ե ներկա լինեն բոլոր ծխերի ներկայացուցիչների յերկու յերրորդ մասը և վոչ պակաս, քան բոլոր իրավազոր անդամների կեսը:

ՅԵՐԲ ե որինական համարվում կոմմունաների և արտելների ընդհանուր ժողովը:

— Կոմմունաների և արտելների ընդհանուր ժողովը սովորաբար որինական ե, յերբ ներկա յե կազմի մեջ մտնող իրավազոր անդամների կեսը, իսկ յերբ քննվում ե հողոգտագործման կարգը, պահանջվում ե իրավազոր անդամների յերկու յերրորդ մասի ներկայությունը:

Ի՞նչպես են վճռվում հարցերը հասարակության ընդհանուր ժողովներում:

— Հարցերը վճռվում են ընդհանուր ժողովում ներկա գտնվող անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:

Իսկ ի՞նչպես ե լուծվում հողոգտագործման կարգը փոխելու հարցը:

— Հողային ամբողջ հասարակության հողոգործման կարգը փոխելու համար պահանջվում ե ընդհանուր ժողովին ներկա յեղող անդամների ձայների յերկու յերրորդ մեծամասնությունը: Ընդհանուր ժողովին ներկա յեղող յուրաքանչյուր հողոգտագործող քանի ձայնի իրավունք ունի:

— Միայն մի ձայնի իրավունք:

ՀՈԴ. 54. Ի՞նչով ե ղեկավարվում ընդհանուր ժողովը հողային հասարակության գործերը քննելիս:

— Ընդհանուր ժողովը պիտի ղեկավարվի Հողային Որենսգրքով և գործող մնացած որենքներով:

Եւ ի՞նչով ե ղեկավարվում ընդհանուր ժողովը:

— Ընդհանուր ժողովը ղեկավարվում ե նաև հասարակության կանոնադրությամբ, համախոսականներով և տեղական սովորություններով: Կարելի յե ղեկավարվել տեղական բոլոր սովորություններով:

— Վոչ. պետք ե աչքի առաջ ունենալ այն սովորությունները, վորոնք յերկը որենքներին հակառակ չեն:

Ո՞վ ե հսկում, վոր որենքները չխախտվեն և ճիշտ գործադրվեն հողային հասարակությունների կողմից:

— Այդ հսկողությունը պարտավոր են կատարել գավառակային գործկոմիերը:

ՀՈԴ. 55. Ի՞նչպես են ձեակերպվում հողային հասարակության ընդհանուր ժողովի վորոշումները:

— Ընդհանուր ժողովի բոլոր վորոշումների համար պետք ե կազմվի արձանագրություն, թե չե վորոշումը չեղյալ կընամարվի:

Ի՞նչ պետք ե նշանակվի արձանագրության մեջ:

— Արձանագրության մեջ պետք ե նշանակվի
ա) Ընդհանուր ժողովի տեղը և ժամանակը.
բ) Ներկա յեղող անդամների թիվը.

գ) Ընդհանուր ժողովի քննած հարցերը և փորոշումները նրանց մասին:

դ) Համաձայն ու հակառակ անդամների թիվը և ուրիշ կարեռը հանգամանքներ:

Ցերք և ընդհանուր ժողովի փորոշումն որինական ուժ ստանում:

— Հողային հասարակության ընդհանուր ժողովի փորոշումներն ուժի մեջ են մտնում արձանագրությունը նախագահի, քարտուղարի և ներկա գործողների մեծամասնության կողմից ստորագրվելուց հետո:

ՀՈԴ. 56. Հողային հասարակությունը վորեե պատասխանատվություն կրում և պետության առաջ:

— Հողային հասարակությունը պետության առաջ պատասխանատու յե յուր ձեռքին յեղած բոլոր հողերը խելացի և ոգտակար յեղանակով ոգտագործելու ինքը ուղարկում:

Ի՞նչ պիտի անի հողային հասարակությունը պետության այդ պահանջը կատարելու համար:

— Հողային հասարակությունը պետք ե հետեւ, վոր ամենքն իրենց հողերը մշակեն իրեւ աշխատավոր ու լավ տնտես. վոր հասարակության հողերի արդյունքը բարձրանա. վոր հողերն անխնա չմշակվեն և ուժասպառ չարվեն. վոր գյուղական տնտեսության մեջ նոր գործիքներ ու մեքենաներ բանեցնվեն. վոր վնասատուների դեմ ժամանակին կովեն. վոր ջուրն արդար ու խելացի բաշխվի ցանքսերի վրա և վոր ընդհանրապես՝ հասարակության տված հողերը մշակվեն խելացի և նպատակահարմար ձևով:

ԳԼՈՒԽ Գ.

ՀՈՂԱՅԻՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀՈԴ. 57. Հողային հասարակությունը հիմնական ինչ

— Հողային հասարակությունն իրավունք ունի յուր լիազոր անդամների ձայների մեծամասնությամբ ընտրելու հողոգտագործման վոր ձեր կամ ենա՝ համայնական, առանձնական կամ ընկերական:

ՀՈԴ. 58. Ի՞նչ կարող ե անել հողային հասարակությունն այն գեղքում, յերբ նրա մի անդամը հողաբաժինը թողնի անմշակ կամ վարձով տա՞ հակառակ որենքի:

— Այդպիսի գեղքերում հողային հասարակությունն իրավունք ունի այդ անդամին մինչև 3 տարի ժամանակով զրկել հողն ոգտագործելու իրավունքից:

Կարող ե այդ անդամը բողոքել, յեթե նա հասարակության վորոշումը համարում է անարդար:

— Կարող ե բողոքել հողային հանձնաժողովին:

ՀՈԴ. 59. Ե՞լ վոր գեղքում հողոգտագործողը կարող ե զրկվել հողից:

— Հողոգտագործողը կարող ե զրկվել հողից նաև այն գեղքում, յերբ հողը մշակում ե անփոյթ ու անխնամ կերպով կամ հողն ուժասպառ ե անում:

Ո՞վ պետք ե նման գեղքերում հարց բարձրացնի հողոգտագործողին հողից զրկելու մասին:

— Այդ մասին իրավունք ունեն հարց բարձրացնելու և հողային հասարակությունը, և հողային մարմինները:

Ո՞ւմ պետք ե դիմել այդպիսի գեղքերում:

— Պետք ե դիմել հողային հանձնաժողովին և ապացուցել, վոր հողոգտագործողն անփոյթ ու անխնամ ե մշակել հողը կամ ուժասպառ արել այն:

Ցերե մեղագրանքն ապացուցվի, քանի տարով հողոգտագործողը կը զրկվի հողից:

— Հոգն անփույթ ու անխնամ շահագործելու կամ ուժասպառ անելու մեջ մեղադրված հողոգտագործողին հողային հանձնաժողովը կարող ե մինչև 3 տարի ժամանակով զրկել հողից։ Կարող ե այդպիսի հողոգտագործողն ստանալ նոր հող ուրիշ տեղում։

— Վոչ. նրան վոչ մի տեղ և վոչ մի հող չի տրվում։

ՀՊԴ. 60. Վերեռում հիշված դեպքերում հողոգտագործողներից խլված հողերն ում տրամադրությանն են անցնում։

— Այդ հողերն անցնում են հողային հասարակության տակ։ Իսկ բնում հոգնած ծխերի հողերը։

— Այդ հողերն ել անցնում են հողային հասարակության տրամադրությանը։

Ապա ումն են անցնում հողից հրաժարվածների, գաղթածների և դատարանի վորոշումով հողից զրկվածների հողերը։

— Այդ բոլոր հողերը մնում են հողային հասարակության կարգադրության տակ։ Իրավունք չունեն այդ բոլոր դեպքերում ազատվող հողերը նախկին հողոգտագործողների ազգականները վերցընելու։

— Թե մոտիկ և թե հեռավոր ազգականներն այդ բոլոր դեպքերում ել վոշ մի իրավունք չունեն ազատված հողերը վերցնելու։ Նրանց մասին կարգադրություն ե անում միայն հողային հասարակությունը։

Ո՞վ իրավունք ունի տեր կանգնելու լքյալ ու տիրադուրկ այգիներին ու տնասեղերին։

— Լքյալ և տիրազուրկ այգիների տերն ել դարձյալ հողային հասարակությունն ե։

ՀՊԴ. 61. Ում տնորինության տակ են մնում հողային

հասարակության սահմանների մեջ գտնվող, բայց չբաժանված հողերը, արտաները, դոերը, ջրերը, ճանապարհները, ճահճուտները և այլն։

— Այդ բոլոր հողերը գտնվում ե հողային հասարակության անմիջական տնօրինության տակ։

ՀՊԴ. 62. Իրավունք ունի հողային հասարակությունը յուր անունով կայք ձեռք բերել կամ ստեղծել։

— Այն. իրավունք ունի։

Իսկ կարող ե հողային հասարակությունը պայմանագրեր կնքել, դատ սկսել, պահանջներ ու միջնորդություններ հարուցել հիմնարկությունների առաջ։

— Այն. կարող ե։

Կարելի յե հողային հասարակությանը դատի տալ և նրան պատասխանագործության կանչել հիմնարկությունների առաջ։

— Այն. կարելի յե։

Հ Ա Տ Վ Ա Ծ

ԾՈՒԽ

(ԱՇԽԱՏԱՎՈՐԱԿԱՆ ՀՈՂԱԳՈՐԾԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ)

Գ Լ Ո Խ Ա.

Ծ Խ Ի Կ Ա Զ Մ Հ

ՀՊԴ. 63. Ի՞նչ բան է ծուխը։

— Ծուխը միասին գյուղական անտեսություն վարող անձերի ընտանեկան աշխատավրական միությունն ե։

Կարող ե ծուխն ունենալ ընտանիք չունեցող միայն մեկ անդամ։

— Այն. ծուխը կարող ե լինել ընտանիք

չունեցող մեկ անդամից, առանց տարբերության՝
կին և, թե տղամարդ:

ՀՈԴ. 64. Ովքեր են համարվում ծխի անդամ:

—Ծխի անդամ համարվում են նրա կազմի
մեջ մտնողները՝ մեծ թե փոքր, ջահել թե ծեր:
Համարվում են ծխի անդամ նաև բացակայողները:

—Բացակայողները, վորոնք ծխից որինա-
կան կարգով չեն հեռացել՝ գտնվում են զինվո-
րական կամ ընտրովի ծառայության մեջ, սովո-
րում են դպրոցներում և կամ գնացել են աշ-
խատավորական վաստակի, համարվում են ծխի
անդամ մնացածներին հավասար իրավունքներով:
Յերբ ե ծխի կազմը մեծանուալ:

—Ծխի կազմը մեծանուալ ե ծնունդի, ամուսնու-
թյան, վորդեգրության և անփեսության դեմք
քում:

Ի՞նչ իրավունքներ ունեն ծխի մեջ ավելացած նոր
անդամները:

—Նրանք նույն իրավունքները և նույն
քան բաժին ունեն ծխից, վորքան առաջվա ան-
դամները:

ՅԵՐԲ ե ծխի կազմը փոքրանուալ:

—Ծխի կազմը փոքրանուալ ե մահվան, ա-
մուսնության կամ հեռանալու դեպքում:

Ամուսնության, վորդեգրության և անփեսության մի՛
ջոցով նոր ծխի անդամ յեղողները կորցնում են իրենց
հողի իրավունքը նախկին ծխի մեջ,

—Այս. ամուսնության, վորդեգրության և
անփեսության հետևանքով՝ նոր ծխի կազմուն
իրավունք ձեռք բերող անդամները կորցնում են
իրենց իրավունքները նախկին ծխի մեջ:

Ի՞նչ իրավունք ունեն ծխի ծերացած և աշխատանք/
ունակությունը կորցրած անդամները:

—Ծխի ծերացած և աշխատանակություն/

կորցրած անդամները նույն իրավունքներն ու-
նեն, ինչ մնացած անդամները:

ՀՈԴ. 65. Ուռն ե պատկանուամ ծխի գույքը:

—Ծխի հողերի, շնոքերի, գյուղատնտեսա-
կան պիտույքների և մնացած գույքի իրավուն-
քը պատկանուամ ե բոլոր անդամներին, առանց
սեռի և հասակի տարբերության:

ՀՈԴ. 66. Ով ե համարվում ծխի ներկայացուցիչը:

—Ծխի տնտեսական գործերի մեջ նրա կա-
ռավարողն ու ներկայացուցիչը համարվում ե
տան գլուխը:

Կարող ե տան գլուխը կին լինել:

—Տան գլուխը, ինչպես տղամարդ, նույն-
պես և կարող ե կին լինել:

ՀՈԴ. 67. Ի՞նչ պիտի անեն ծխի անդամները, յերբ
տան գլուխը վատ կառավարի տնտեսության գործերը:

—Նրանք պետք ե դիմեն գավառակային
գործկոմին և ինդրեն նշանակել տան գլուխ մեկ
ուրիշին:

Կարող ե գավգործկոմը տան գլուխ նշանակել ուրիշ
ծխի անդամի:

—Վո՞չ. նոր տան գլուխը պետք ե նշանակ-
վի նույն ծխի կազմից:

Ո՞վ պիտի հաստատի, վոր տան գլուխը վատ ե կա-
ռավարում, քանդում և ծխի տնտեսությունը և կարիք կա-
նորը նշանակելու:

—Այդ բանը պետք ե հաստատի գյուղի
խորհուրդը և այդ մասին վկայական տա ծխի
անդամներին գտվառակային գործկոմին ներկա-
յացնելու համար:

ՀՈԴ. 68. Ի՞նչ պետք ե անել, յերբ ծխի մեջ մնան
մենակ անչափահաս անդամները:

—Մենակ անչափահաս անդամներով մնա-
ցած ծխի համար պիտի ընտրել ինամակալ,

Ո՞վ պիտի ընտրի խնամակալ անչափահաս անդամներ ունեցող ծխի վրա:

—Միայն անչափահաս անդամներ ունեցաղ ծխի վրա խնամակալ պիտի ընտրի գյուղի խորհուրդը:

ՀՈԴ. 69. Իրավունք ունի ծխի անդամը կամ տան գլուխը ծխի գույքը գործադրել յուր անձնական կարիքների համար:

—Վոչ, առանց անդամների համաձայնության՝ իրավունք չունի, Ծխի գույքը պիտի գործադրվի բոլոր անդամների կարիքները հոգալու համար:

Առանձին անդամի կամ տան գլխի անձնական կարիքների համար կատարած պարտքերի դիմաց կարող ե հատկացվել ծխի գույքը:

—Ծխի գույքը վոչ վարչական և վոչ գատական կարգով չի կարող հատկացվել այն պարտք վճարելուն, վոր արել և ծխի անդամը յուր անձնական կարիքների համար:

ՀՈԴ. 70. Վարտեղից պետք ե ճիշտ տեղեկություններ բաղել ծխի կազմի և նրա անդամների մասին:

—Այդ տեղեկությունները պետք ե վերցնել գյուղի խորհրդից:

Ի՞նչ պետք ե անի գյուղի խորհուրդը, վորպեսզի նա ճիշտ տեղեկություններ ունենա ծխերի կազմի և նրանց անդամների մասին:

—Հողային Որենսգրքի պահանջով՝ գյուղի խորհուրդը պետք ե ունենա ծխամատյան. եդ ծխամատյանի մեջ պիտի անուն-անուն ցուցակագրի հասարակության բոլոր ծխերն ու անդամներին:

Ի՞նչ պիտի անի հողոգտագործողը, յերբ գյուղի խորհուրդը չհամաձայնի ցուցակագրել իրեն կամ յուր ծխի անդամին:

—Հողոգտագործողը 14 որվա մեջ պետք ե հողային հանձնաժողովին գանգատ տա:

ԳԼՈՒԽ Բ.

ԱՇԽԱՏԱՎՈՐԱԿԱՆ ՀՈՂԱԳՈՐԾԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (Ծխերի) ԲԱԺԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀՈԴ. 71. Ի՞նչ բան ե տնտեսության կամ ծխի բաժանությունը:

—Տնտեսության բաժանությունն այն ե, փոք ծխի անդամները յերկու կամ յերեք տեղ են լինում առանձին-առանձին ապրելու և հողոգտագործություն անելու համար:

Ծխի բաժանության ժամանակ բացի անդամներից լինչն ե բաժանվում:

—Բաժանվում են նաև ծխի բոլոր հողերն ու ամբողջ գույքը:

Ում վրա յեն բաժանվում տնտեսության հողերն ու գյույքը:

—Հողերն ու գույքը բաժանվում են ծխի անդամների վրա:

Բաժանության ժամանակ կարող ե տարբերություն լինել անդամների հասակի կամ սեռի նկատմամբ:

—Վոչ, բաժանության ժամանակ ծխի բոլոր անդամները՝ մեծ թե փոքր, կին թե տըղամարդ, հավասար բաժին են ստանում:

ՀՈԴ. 72. Միայն վոք դեպքում ե թույլատրվում ծխի հողերի բաժանություն կատարել:

—Ծխի հողերի բաժանություն թույլատրվում ե կատարել միայն այն դեպքում և այն պայմանով, վոք ծխի բաժանվող անդամների համար զատվող հողերի վրա հնարավոր լինի կազմակերպել նոր հողագործական տնտեսություն:

Իսկ յեթե այդ անելու հնարավորություն չկամ:
—Այդ դեպքում հողերի բաժանություն կա-
տարել չի կարելի, այլ պետք ե տեղի ունենա
միայն ծխի կարողության բաժանություն:

ՀՊԴ. 73. Ո՞վ իրավունք չունի ծխի բաժանությունը
պահանջելու:

—Ծխից բաժանվելու իրավունք չունեն 18
տարին շլացած անդամները:
Ե՞ւ ով իրավունք չունի ծխի բաժանությունը պա-
հանջելու:

—Մեկ ել իրավունք չունեն ծխից բաժին
պահանջելու նրանք, ովքեր վեց տարի շարու-
նակ իրենց աշխատանքով կամ միջոցներով չեն
մասնակցել ծխի տնտեսությանը:

Իսկ յեթե նրանք ծխի տնտեսությանը չեն մասնակ-
ցել զինվորական կամ ընտրովի ծառայության, հիվանդու-
թյան կամ դպրոցում ուսանելու պատճառով, դարձյալ
բաժանություն պահանջելու իրավունք չունեն:

—Զինվորական կամ ընտրովի ծառայության,
հիվանդության կամ ուսանելու պատճառով տըն-
տեսության աշխատանքներին չմասնակցողները,
յեթե մինչև անգամ շատ յերկար բացակայեն,
դարձյալ և ամեն ժամանակ իրավունք ունեն
ծխի բաժանությունը պահանջելու:

ՀՊԴ. 74. Ի՞նչպես ե կատարվում ծխի հողերի և կա-
ռողության բաժանությունը:

—Ծխի հողերն ու կարողությունը բաժան-
վում ե անդամների մեջ այնպես, ինչպես վոր
կան, այսինքն՝ շատին շատ, քչին քիչ—համ հո-
ղից, համ կարողությունից:
Կարո՞ղ ե մեկին պակաս հող տրվել փոխարենը կարո-
ղությունից հատուցանելով:

—Վո՞չ. բաժանվող կողմերի մեջ վոչ մի
գնով ու պայմանով հողն ավելի կամ պակաս

տրվել չե կարող: Հողից հավասար բաժին պիտի
տրվի կողմերին՝ ըստ չնչերի:
Իսկ հնարավոր ե կարողության մի առարկան փոխա-
նակել մի ուրիշ առարկայով:

—Այս. կարողության առարկաները կարելի
յե փոխանակել: Որինակ՝ բաժանվող կողմերից
մեկին կարող ե տրվել մի զույգ լծկան, իսկ
մյուս կողմին այդ լծկանների հավասար արժեքն
ունեցող կով, վոչխար, դրամ կամ այլ կարողու-
թյունն:

ՀՊԴ. 75. Վո՞ր կարողությունն ե յենթակա բաժա-
նության:

—Բաժանության՝ յենթակա յե ծխի ընդհա-
նումը ոգտագործության տակ գտնվող կարողու-
թյունը:

Իսկ ի՞նչը չի կարելի բաժանել:

—Զի կարելի բաժանել այն, ինչ պատկա-
նում ե ծխի առանձին անդամի գործածությանը
և կամ այն, ինչ ձեռք ե բերված առանձին ան-
դամի անձնական միջոցներով:

Ե՞ւ վոր գույքը չի կարելի բաժանության յենթարկել:

—Զի կարելի բաժանության յենթարկել նաև
այն գույքը, վոր տեղական սովորությունների
համաձայն՝ պատկանում ե ծխի առանձին ան-
դամին:

ՀՊԴ. 76. Ի՞նչ ե պահանջվում կողմերից՝ բաժանու-
թյան բոլոր դեպքերում:

—Բաժանության բոլոր դեպքերում կողմե-
րը պարտավոր են կազմել բաժնեգիր:

Ի՞նչ պետք ե գրված լինի բաժնեգրի մեջ:

—Բաժնեգրի մեջ պետք ե գրված լինի՝
ա) ՅԵՐՐ ե վճրտեղ ե կատարվել բաժանու-
թյունը.
բ) Ծխի վո՞ր անդամների մեջ ե յեղել բաժա-
նությունը.

գ) Տեսակով և տարածությամբ ի՞նչ հողամասեր և ի՞նչպես են բաժանվում կողմերի մեջ.

ե) Ի՞նչքան ժամանակում և ի՞նչպես պիտի կատարվի բաժանությունը.

յի) Կողմերի ցանկացած ուրիշ պայմանները
և զ) կողմերի ստորագրությունը:

Ո՞ւմ պետք ե ներկայացնեն կազմված բաժնեգիրը:

— Կողմերն իրանց համաձայնությամբ կազմված բաժնեգիրը տոմարագրելու համար պիտի ներկայացնեն գավառակային գործկոմին:

ՀՊԴ. 77. Կարող ե գավառակային գործկոմը չտոմարագրել բաժնեգիրը:

— Գավառակային գործկոմը բաժնեգիրը կարող ե չտոմարագրել միայն այն դեպքում, յերբ նրա մեջ կան որենքին հակառակ պայմաններ ու կետեր:

Ի՞նչ կարող են անել կողմերը, յեթե նրանք գտնեն, վոր գավառակային գործկոմը սխալ ե և իրավունք չունի մերժելու բաժնեգիրի տոմարագրությունը:

— Այդ դեպքում կողմերը 14 որվա ընթացքում կարող են դիմել գավառային հանձնաժողովին բաժնեգիրը քննելու և հաստատելու խնդրով:

ՀՊԴ. 78. Ի՞նչպես պիտի վարվեն բաժանվողները, յերբ իրենց մեջ համաձայնություն չկա և բաժնեգիր չի կազմվում:

— Յերբ բաժանվող կողմերի մեջ փոխադարձ համաձայնություն և բաժնեգիր չի կազմվում, այդ դեպքում բաժանություն պահանջողը պետք ե խնդրի, վոր գավառակային հողային հանձնաժողովը կատարի պահանջողը բաժանությունը:

Բաժանության գործը հողային հանձնաժողովին հանձնելուց հետո ել ե պահանջողը տոմարագրությունը:

— Այս գավառակային գործկոմը պետք

անպայման տոմարագրի յուր շրջանում տեղի ունեցող բոլոր բաժանությունները: Հողային հանձնաժողովներում քննվող բաժանությունները գավառակային գործկոմը տոմարագրում են բաժանության մասին վերջնական վճիռ կայանալուց հետո:

ՀՊԴ. 79. Միշտ են բաժանության վիճելի գործերը քննվում հողային հանձնաժողովներում:

— Վոչ. այն բաժանությունը, վոր հողի հետ վոչ մի կապ չունի, այլ վերաբերում է հողոգտագործողների միայն կարողությանը, քըննվում ե ժողովրդական դատարանում:

Իսկ ով ե քննում համ հողի, համ ել կարողության բաժանությունը միասին:

— Այդպիսի գործերը քննում են հողային հանձնաժողովները:

Ո՞վ ե քննում տան և անատեղերի բաժանության վեճերը:

— Տան և անատեղերի բաժանության վեճերն ել քննում են հողային հանձնաժողովները:

ՀՊԴ. 80. Ի՞նչ պիտի անեն հողային հանձնաժողովները ծխի հողերի բաժանության գործեր լուծելիս:

— Հողերի բաժանության գործեր քննելիս, հողային հանձնաժողովները պիտի աշխատեն բաժանվող անդամներին բավարարել հողային հասարակությանը կամ հողային որդաններին յենթակա ազատ հողերի հաշվին:

Իսկ յեթե պարզվի, վոր ազատ ու չոգտագործված հողեր չկան բաժանվող կողմին տալու համար:

— Ազատ հողեր չկանելու դեպքում հողային հանձնաժողովը ծխի ոգտագործության տակ յեղած հողերը պիտի բաժանի կողմերի մեջ:

ՀՊԴ. 81. Ի՞նչ պահանջելու իրավունք ունի բաժանվող նոր ծուխը հողային հասարակությունից:

— Բաժանվող նոր ծուլսն իրավունք ունի հասարակությունից պահանջելու, վոր տան և ուրիշ շենքերի համար իրեն հողամաս հատկացվի պահեստի ազատ հողերից:

Այդ պահանջը միշտ իրավունք ունի ներկայացնելու բաժանվող ծուլսը:

— Վոչ. նա այդպիսի պահանջ կարող է անել միայն այն ժամանակ, յերբ նախկին ծխի տնատեղից նրան բավարար բաժին տալու հնար չկա:

ՀՈԴ. 82. Ծխից բաժանվող անդամների հողաբաժնի չափն ի՞նչպես ե վորոշվում:

— Համայնական հողոգտագործություն ունեցող հասարակությունների մեջ ծխից բաժանվող անդամների հողաբաժնի չափը վորոշվում է շնչերի թվի համաձայն:

Իսկ ի՞նչպես ե այդ կատարվում առանձնական կարգի հողոգտագործության ժամանակ:

— Առանձնական կարգի հողոգտագործության ժամանակ բաժանվող անդամների հողաբաժնի չափը վորոշվում է տեղական սովորությունների համաձայն, յեթե այդ չի հակասում որենքին:

Բաժանության ժամանակ կանայք և տղամարդիկ հավասար իրավունքներ ունեն:

— Այն. բաժանության բոլոր գեպքերում յերկու սեռի անդամները՝ կին թե տղամարդ, համահավասար իրավունքներ ունեն:

Իրավունք ունեն գավգործկոմները ծխերի բաժանության մասին կանոններ մշակելու:

— Այն. գավգործկոմներն իրավունք ունեն ծխերի բաժանության մասին տեղական պայմաններին համապատասխան կանոններ ու հրահանգներ մշակելու:

Ում կողմից հաստատվելուց հետո այդ կանոնները

կարող են հրատարակվել և գործադրության մեջ դրվել:

— Ծխերի բաժանության մասին գավգործկոմների մշակած կանոններն ու հրահանգները կարող են հրատարակվել և գործադրվել միայն Հողժողկոմատի կողմից հաստատվելուց հետո:

Պարտադիր են գավգործկոմի կողմից Հողժողկոմատի հաստատությամբ հրատարակած բաժանության կանոններն ու հրահանգները հողային հանձնաժողովների համար:

— Այո. հիշյալ կանոններն ու հրահանգները պարտադիր են նաև հողային հանձնաժողովների համար:

ԳԼՈՒԽ Գ.

ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (Ծխերը) ՄԱՆՐԱՅՆԵԼՈՒ ԱՌԱՋՆ ԱՌՆԵԼՈՒ ՄԻջներ

ՀՈԴ. 83. Ծխի անդամների բաժանության հետևանքով ի՞նչ են լինում տնտեսությունները:

— Բաժանության հետեանքով տնտեսությունները մանրանում, թուլանում և շատ անգամ քայլայվում են:

Ի՞նչ պիտի անեն գավգործկոմները, վորպեսզի բաժանության պատճառով տնտեսությունները շատ չմանրանան ու չքայլայվեն:

— Գավգործկոմները պետք ե հրատարակեն պարտադիր վորոշումներ՝ անտեսությունները մանրացնելու առաջն առնելու մասին:

Ի՞նչ բան պետք ե շեշտված լինի պարտադիր վորոշումների մեջ:

— Տնտեսությունները մանրացնելու առաջն առնելու մասին գավգործկոմների հրատարակած պարտադիր վորոշումների մեջ պետք ե անպայման շեշտված լինի, թե յուրաքանչյուր ծուխ

առնվազն ի՞նչքան հողով պետք ե ապահովված լինի, վոր ել բաժանել, մասնատել անկարելի լինի:

Ո՞վ ե սահմանում անբաժանելի կամ անմասնատելի հողաբաժինների չափը:

— Անմասնատելի հողաբաժինների չափը նախորոք սահմանում ե Հողժողկոմատը:

ՀՊԴ. 84. Ո՞ւմ համար ե պարտադիր անմասնատելի հողաբաժինների համար սահմանված չափը:

— Անմասնատելի հողաբաժինների համար սահմանված չափը պարտադիր ե հատվածային և ագարակային բոլոր տնտեսությունների համար:

Ի՞նչպես ե վորոշվում տնտեսության անբաժանելիության չափը համայնական հողոգտագործության ժամանակ:

— Համայնական հողոգտագործության ժամանակ տնտեսությունների հողերի անբաժանելիության չափը վորոշում ե ի՞նքը՝ հողային հասարակություններ:

Կարհղ են ծխի անդամները վորոշել իրենց տնտեսության անբաժանելիության ժամանակն ու չափը:

— Այս. նույն ծխի անդամները կարող են կամավոր կերպով վորոշել իրենց տնտեսության անբաժանելիության համար ժամանակ, չափ և որենքին չհակասող այլ պայմաններ:

ՀՊԴ. 85. Ո՞ւմ վորոշումով ե կարելի տնտեսություններն անբաժանելի հայտարարել ամբողջ հասարակության համար:

— Ամբողջ հասարակության համար տնտեսություններն անբաժանելի կարելի յե հայտարարել իրավադոր բոլոր անդամների յերկու յերրորդականի վորոշումով:

Քանի տարով կարող ե հայտարարվել տնտեսությունների անբաժանելիությունը:

— Տնտեսությունների անբաժանելությունը

հասարակությունը կարող ե սահմանել Յ և ավելի տարով:

Առանձին ծխերի անբաժանելիության հարցն ի՞նչպես ե վորոշվում:

— Առանձին ծխերի անբաժանելիության հարցը վորոշվում ե իրավագոր բոլոր անդամների համաձայնությամբ:

Տնտեսությունների անբաժանելիության մասին կայացած համաձայնությունը յերբ ե ուժի մեջ մտնում:

— Համաձայնությունն ուժի մեջ ե մտնում գավառային գործկոմում տոմարագրվելուց հետո:

Համայնական հողոգտագործության ժամանակ տնտեսություններն անբաժանելի հայտարարած հասարակությունները կարող են հողերի վերաբաժանություն կատարել:

— Այս. հողերի վերաբաժանությունը սահմանված ժամանակին պետք ե կատարվի:

Այդ դեպքում թույլատրվում ե անմասնատելի հողաբաժինների սահմաններն ու տարածությունը վոփիխության յենթարկել:

— Այս. հողերի վերաբաժանության ժամանակ վոփիխության կարող են յենթարկվել նաև անմասնատելի տնտեսությունների հողաբաժինների սահմաններն ու տարածությունը:

ՀՊԴ. 86. Անմասնատելի հայտարարված տնտեսությունից բաժանվելու իրավունքից զրկվում են նրա անդամները:

— Վաչ. ծխի անդամներն իրավունք ունեն բաժանվելու նաև անմասնատելի ճանաչված տընտեսությունից:

Այդ դեպքում բաժանվող անդամն ի՞նչպես ե ստանում յուր բաժինը տնտեսությունից:

— Անմասնատելի հայտարարված տնտեսությունից բաժանվող անդամը հատուցումն ե ըս-

տանում դրամով կամ մթերքներով. նա հողաբաժին չե ստանում:

Ո՞վ ե լուծում կողմների մեջ այս առթիվ առաջացած անհամաձայնություններն ու վեճելը:

— Անմասնատելի տնտեսություններից զատվելու գեղքում, կողմերի մեջ հատուցման մասին կայացած վեճերն ու անհամաձայնությունները լուծում են հողային հանձնաժողովները:

Ի՞նչ չափի կարող ե հասնել անմասնատելի հայտարարված տնտեսությունից զատվող անդամի բաժինը:

— Անմասնատելի ընդունված տնտեսությունից զատվող անդամի բաժինը չե կարող ավելի լինել նույն տնտեսության կարգ ու սարքի մի յերրորդական արժեքից:

Ի՞նչ պիտի անի մնացող ծուխը, յեթե նա բաժանվողն դրամով կամ մթերքով անմիջապես հատուցանելու հայրավորություն չունի:

— Անմասնատելի ճանաչված ծխի բաժանվողին մնացող անդամները պահանջող հատուցումը կարող են տալ մաս-մաս՝ մինչև հինգ տարվա ընթացքում:

Մաս-մաս վճարելու համար բաժանվողը կարող ե տոկոսներ կամ հատուցման ավելացում պահանջել:

— Վոչ. մնացող ծուխը մաս-մաս վճարումը կատարում ե առանց տոկոսների և հավելումների:

ՀՈԴ. 87. Ծխերի չտոմարագրված բաժանություններն որինական ուժ ունեն:

— Վոչ. գավառակային գործկոմում չտոմարագրված բաժանությունները որինական ուժ չունեն:

Հողաշինարարության և հողաբաժանության ժամանակինչպես են վերաբերվում բաժանված այն ծխերին, վորոնք չեն տոմարագրված:

— Նըանց նայում են իրեն չբաժանված մեկ ծուխ:

Իսկ բնչպես են վերաբերվում այդպիսի ծխերին պետական հարկերի, տուրքերի և ուրիշ պարտավորությունների գանձման ժամանակի:

— Նաև այդ գեղքում նման ծխերին նայում են իրեն չբաժանված մեկ ծուխ:

ՀԱՏՎԱԾ VI

ԵՃԽԱՏԵՎՈՐՍԿԱՆ ՀՅԴՈԳՏԱԳՈՐծԱՄԱՆ ԿԵՐՊԵՐԸ

ԳԼՈՒԽ Ա.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԻՄՈՒԽՆԵՐ

ՀՈԴ. 88. Քանի կարգ ե հաստատված հողի ոգտագործության համար:

— Հողային Որենսգիրքը հողի աշխատավորական ոգտագործության համար սահմանել ե յերեք կարգ:

Առաջին՝ համայնական հողոգտագործություն. ես դեպքում հողը բոլոր ծխերին աղբավում ե միասին, իսկ նըանք եղ հողը քանի տարբին մի անգամ հավասար կերպով բաժանում են իրենց մեջ:

Յերկրորդ՝ առանձնական հողոգտագործություն. ես դեպքում ծուխն իրա բաժին հողը մեկ անգամից ստանում ե և դրանից հետո նըանք միշտ մնում ե իրա ձեռքին անփափոխ:

Յերրորդ՝ ընկերական հողոգտագործություն. ես դեպքում հողը տրվում ե հասարակության բոլոր անդամներին, վորոնք հողը մշակում են միասեղ և դրա համար կազմում են կոմմունա,

արտել կամ հողոգտագործական միություններ: Կարող ե նույն հասարակությունը հողոգտագործության մի քանի կարգ ունենալ:

— Կարող ե, վարելահողը կարելի յե ոգտագործել համայնական կարգով, իսկ խոտհարքը և արոտը՝ ընկերական, կամ վարելահողը կարելի յե ոգտագործել առանձնական կարգով, իսկ արոտը՝ համայնական և այլն: Մրան առում են խորը կարգի հողոգտագործություն:

Խառը կարգի հողոգտագործության ժամանակ հողոգտագործման վեր կարգն ե համարվում էիմասկան՝ հողային հասարակության համար:

— Էիմասկան համարվում ե այն կարգը, վոր ընդունվում ե հողի գլխավոր տեսքի համար (վարելահողի, խոտհարքի և այլն):

ՀՈԴ. 89. Հողոգտագործման կարգը փոխելու ժամանակ ի՞նչ կարող են անել հասարակության են անդամները, վորոնք դրան համաձայն չեն:

— Նրանք կարող են իրենց հողերը դատել մեկ տեղում և պահել հողոգտագործման առաջվա կարգը:

ԳԼՈՒԽ Բ.

ՀՈՂՈԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՅՆԱԿԱՆ ԿԱՐԳԸ

ՀՈԴ. 90. Համայնական հողոգտագործության ժամանակ ամեն մի ծուխ ի՞նչ իրավունք ունի հողի վրա:

— Ամեն մի ծուխ իրավունք ունի բոլորին հավասար յուր մասն ստանալու հասարակության հողաբաժիններից:

Կարող են այդ դեպքում ծխի հողաբաժինները փոփության յենթարկվել:

— Կարող են միայն այն դեպքում, յերբ հա-

սարակության մեջ բոլոր հողերի հավասարեցնող բաժանություն ե կատարվում:

ՀՈԴ. 91. Համայնական հողոգտագործություն ունեցող հասարակությունների մեջ յերբ ե հողերի հավասար բաժանություն կատարվում:

— Կատարվում ե վոչ շուտ ինը տարին մի անգամ՝ հողերի ընդհանուր վերաբաժանության ժամանակ:

Ուրիշ ի՞նչպես կարող ե կատարվել հողերի հավասար վերաբաժանություն համայնական հողոգտագործություն ունեցող հասարակությունների ծխերի մեջ:

— Այդ կարող ե կատարվել առանձին ծխերի հողաբաժիններն ավելացնելու և պակասեցնելու միջոցով:

Համայնական հողոգտագործություն ունեցող հասարակությունների մեջ ծխերն իրավունք ունեն հրաժարվելու հողերի վերաբաժանությունից:

— Վոչ:

Իսկ կարող են շահագրգոված ծխերը հրաժարվել մինչև վերաբաժանությունը կատարվող կրծատումներից ու հավելումներից:

— Այս, կարող են հրաժարվել և պահանջել վոր յերեք տարին մի անգամ միայն կատարվի:

ՀՈԴ. 92. Հողաբաժանության կանոններն ու կարգը ով ե վորոշում հասարակության համար:

— Վորոշում ե ինքը՝ հողային հասարակությունը առանձին կանոնադրության կամ համախոսականի միջոցով:

Ի՞նչպես պիտի լինեն հողաբաժանության մասին կազմված կանոնադրությունն ու համախոսականը:

— Նրանք պետք ե լինեն հողային որենքների պահանջների համաձայն:

Ի՞նչ պետք ե անպայման վորոշված լինի հասարա-

կության հողային կանոնադրության կամ համախոսականի մեջ:

—Հողային կանոնադրության կամ համախոսականի մեջ պետք է անգայման վարոշված լինի. —

ա) Հողի վճր տեսքն եւ բաժանվում՝ վարելահողը, խոտհարքը, բանջարանոցները, տնատեղերը և այլն.

բ) Ում վրա յեւ բաժանվում հողը՝ շնչերի, ծխերի, թե աշխատավոր ձեռքերի.

գ) Քանի տարվա համար եւ բաժանվում հողը.

դ) Զբաժանվող հողերից (արոտ, ճահճուտներ, զուեր և այլն) ինչպես պետք եւ ոգտվի հասարակությունը:

ՀԱԴ. 93. Իրավունք ունեն պետական մարմինները վարոշելու՝ շնչերի, ծխերի, թե աշխատավոր ձեռքերի վրա պիտի բաժանվի հողը:

—Այդ հարցը կարող եւ վորոշել գավառային գործկոմը, բայց նրա այդ վորոշումն ուժ կունենա են ժամանակ, յերբ հաստատված կը լինի Հողժողկոմատի կողմից:

ԳԼՈՒ Գ.

ՀՈՂՈԳՏՄԱԳՈՐԾՄԱՆ ԱՌԱՆՁՆԱԿԱՆ ԿԱՐԳԸ

ՀԱԴ. 94. Ի՞նչ իրավունք եւ արվում հողոգտագործող ծխերին առանձնական հողոգտագործության ժամանակի:

—Առանձնական հողոգտագործության ժամանակ յուրաքանչյուր ծխին իրավունք եւ արվում ունենալ հողի անփոփոխ տարածություն: Ի՞նչ ձեր լինում առանձնական հողոգտագործությունը:

—Առանձնական հողոգտագործությունը լինում ե ցրված, հատվածային և ագարակային հողաբաժնի ձևով:

ՀԱԴ. 95. Վորըն ե առանձնական-ցրված հողամասերով հողոգտագործությունը:

—Առանձնական - ցրված հողոգտագործությունն այն ե, վոր ծուխը յուր բաժին հողամասերը՝ ըստ կատեգորիայի և տեսքի, ստանում ե ուրիշ ծխերի հետ խառը մի քանի տեղում: Ի՞նչ առարքերություն կա համայնական և առանձնական-ցրված հողոգտագործությունների մեջ:

—Համայնականի ժամանակ շարունակ հողաբաժանությունն ե կատարվում, իսկ առանձնական-ցրված հողամասերը բաժանել չի կարելի և միշտ մնում են անփոփոխ սահմաններում:

ՀԱԴ. 96. Վորըն ե հատվածային հողոգտագործությունը:

—Հատվածային հողոգտագործությունն այն ե, վոր ծուխը յուր բաժին ամբողջ հողը ստանում ե մի կտորով մի տեղում, իսկ տնատեղ մյուս ծխերի հետ միասին ստանում ե ընդհանուր գյուղատեղում:

ՀԱԴ. 97. Վորըն ե ագարակային հողոգտագործությունը:

—Ագարակային հողոգտագործությունն այն ե, վոր ծուխը յուր ամբողջ հողաբաժինը՝ անտեղներ ել հետը, ստանում ե մի տեղում և մի կտորով:

Ագարակային հողոգտագործություն ունեցող ծուխը կյուղում անտեղ չե ստանում:

—Վորըն ագարակային հողոգտագործություն ունեցող ծուխը յուր տունը և անտեսությունը շինում ե գյուղատեղից դուրս՝ մեկ կտորով ըստացած յուր հողաբաժնի վրա:

Ի՞նչ պիտի անի գյուղում ունեցած յուր տունը ա-
գարակային հողոգտագործության դաւս յեկող ծուխը:

—Ագարակային հողոգտագործության դուքս
յեկող հողոգտագործողը գյուղում ունեցած յուր
տունը յերեք տարվա ընթացքում պիտի փոխա-
դրել ագարակ կամ նույն ժամանակում գավա-
ռակային գործկոմի թույլավությամբ՝ շենքերը և
այլ արժեքները վաճառի մնացող հողոգտագոր-
ծողներին՝ ըստ հարմարության:

Այս գեղքում անատեղն ում կարգադրությանն ե
անցնում:

—Տնատեղն անցնում ե հողային հասարա-
կության կարգադրությանը:

ՀՊԴ. 98. Յերբ ե ձանաչվում առանձնական հողոգ-
տագործությունը որինական:

—Առանձնական հողոգտագործությունը ձա-
նաչվում ե որինական այն ժամանակ, յերբ նա
հաստատված ե հողաշինարարական կարգով և
կամ ընդունված ե հասարակության համախռսա-
կանով, վորը նույնպես հաստատված ե հողային
որդանների կողմից:

ՀՊԴ. 99. Ի՞նչպես ե ստեղծվում նոր առանձնական
հողոգտագործություն:

—Նոր առանձնական հողոգտագործություն
ստեղծվում ե հասարակության համախռսակա-
նով, իսկ ամեն մի ծխի հողաբաժնի չափը վո-
րոշվում ե մյուսների հետ ընդհանուր նորմայով:

Առանձնական հողոգտագործություն ունեցող ծխերի
հողերի չափն ի՞նչպես ե վորոշվում:

—Առանձնական հողոգտագործություն ու-
նեցող ծխերի հողերի չափը վորոշվում ե նրանց
իսկական և անվիճելի սահմաններում, վոր փո-
փոխության չի կարող յենթարկվել:

Ո՞վ ե լուծում առանձնական հողոգտագործության

ժամանակ հողի սահմանների մասին առաջ յեկած վե-
ճերը:

—Այդ վեճերը լուծում են հողային հանձ-
նաժողովները:

Ի՞նչ փաստաթղթերի հիման վրա յեն լուծում հանձ-
նաժողովները առանձնական հողոգտագործության հողա-
յին սահմանների վեճերը:

—Այդ վեճերը լուծում են հատակագծերի,
հողային մարմինների վորոշումների, վկանների
ցուցմունքների և նման այլ տվյալների հիման
վրա:

ՀՊԴ. 100. Առանձնական-ցրված կարգի հողոգտա-
գործության ժամանակ հողամասերի տեղն ու սահմաննե-
րը կարող են փոփոխության յենթարկվել:

—Այս. կարող են յենթարկվել փոփոխու-
թյան պետական և ներքին հողաշինարարության
ժամանակ:

Ե՞լ յերբ կարող են առանձնական կարգի հողոգտագոր-
ծության ժամանակ հողամասերի սահմաններն ու տեղը
փոփոխության յենթարկվել:

—Կարող են փոփոխության յենթարկվելնաև
այն ժամանակ, յերբ հողամասերը գրավվում են
պետական պետքերի համար:

Ե՞լ յերբ կարող են առանձնական հողոգտագործության
հողամասերի սահմաններն ու տեղը փոփոխության յեն-
թարկվել:

—Մեկ ել այն ժամանակ, յերբ՝ հասարա-
կությունը հողի մշակության ձևերը լավացնելու,
ջրանցքներն ու ճանապարհները կանոնավորելու
աշխատանք ե սկսում:

Կարող են առանց հողոգտագործողի համաձայնության՝
փոփոխության յենթարկվել բարելավված ագարակների ու
հատվածների սահմանները:

—Վո՞չ. սովորաբար չի կարելի, իսկ հողա-

շինարարության կարգով և պետական մեծ կարիքների դեպքում թույլ և տրվում բարելավված ազարակների ու հատվածների սահմանները փոփոխության յենթարկել: Այս դեպքում ել հողոգտագործողներն ստանում են իրենց կրած վրհանները:

ԳԼՈՒԽ Գ.

ՀՈՂՈԳՏԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐԱԿԱՆ ԿԱՐԳԸ

ՀՊԴ. 101. Ի՞նչ իրավունք ունեն հողոգտագործողներն ընկերական հողոգտագործության ժամանակ:

— Ընկերական հողոգտագործության ժամանակ ամեն մի հողոգտագործող իրավունք ունի մյուսների հետ միասին ոգավելու հասարակության ընդհանուր հողերից:

Ընկերական հողոգտագործության ժամանակ ամեն մի հողոգտագործողի հողաբաժինն առանձին չի արվում:

— Վ. ընկերության անդամներն առանձին հողամաս ունենալու իրավունք չունեն:

ՀՊԴ. 102. Ի՞նչ նպատակի յեն ծառայում ընկերական հողոգտագործություն կազմող հասարակությունները:

— Ընկերական հողոգտագործություն կազմող հասարակությունները ծառայում են իրենց բոլոր անդամների աշխատանքը շահավետ կերպով ոգտագործելու, միացյալ ուժերով գյուղատնտեսական գործն ոգտագործ կազմակերպելու և այլ միջոցներով ընկերության համար շատ արժեքներ ստեղծելու նպատակին:

Ի՞նչպես են կազմվում ընկերական հողոգտագործություն ունեցող հասարակությունները:

— Նրանք կազմվում են բոլոր ցանկացող անդամների կամագոր համաձայնությամբ:

Ընկերական հողոգտագործություն ունեցող հասարակությունն ինչ հողերի վրա յետանում տնտեսությունը:

— Ընկերական հողոգտագործություն ունեցող հասարակությունը տնտեսությունը վարում ե կամ անդամների միացյալ հողերի, կամ թե չե ընկերության համար հողային մարմինների հատկացրած հողերի վրա:

ՀՊԴ. 103. Կոմմունայի ժամանակ անդամների հողերը զատված են լինում:

— Վ. կոմմունայի բոլոր անդամների հողերը լինում են միասին, առանձնացած հող վոչ մի անդամ չի ունենում:

Ի՞նչ չափով են մասնակցում կոմմունայի անդամները նրա կազմակերպությանը:

— Կոմմունա կազմակերպելիս նրա մեջ մանող բոլոր անդամներն իրենց ամբողջ ունեցածը՝ շատ թե քիչ, արամագրում են կոմմունային:

Ի՞նչ չափով են կոմմունայի անդամները մասնակցում աշխատանքներին:

— Բոլոր անդամները մասնակցում են իրենց ուժերի չափով:

Իսկ ինչպես են բաժին ստանում կոմմունայի անդամներն աշխատանքի արդյունքից:

— Կոմմունայի անդամներն աշխատանքի արդյունքից բաժին են ստանում ունեցած կարիքի չափով:

Կարող ե շատ աշխատավոր ձեռքեր ունեցող կամ շատ գույք մեջ տեղ գրած ընտանիքը շատ բաժին պահանջել:

— Վ. կոմմունայի մեջ կարիքները բավարարելու հարցում վոչ մեկի համար արտօնություն կամ առավելություն չկա:

Արտելի անդամների հողերն ինչպես են լինում:

—Արտելի անդամների հողաբաժինը լինում է վորոշված. կարող ե լինել նաև զատված:
Ի՞նչպես են մասնակցում արտելի անդամները նրա կազմակերպության ու աշխատանքներին:

—Արտելի անդամները մասնակցում են նըրա կազմակերպության ու աշխատանքներին իրենց մեջ կեքած պայմանագրի (կանոնադրության) համաձայն:

Կարող ե ծխի անդամների մի մասը մասնակցել արտելին, իսկ մյուս մասը՝ շարունակել անհատական անտեսությունը:

—Այն, կարող ե: Այդ չի թույլատրվում միայն կոմմունայի ժամանակ, վորի անդամներն իրավունք չունեն, բացի կոմմունայից, ուրեղ տեղ կամ արտելի հետ անտեսություն և դույք ունենալու:

Ի՞նչպես են բաժանվում արտելի անդամների մեջ աշխատանքի արդյունքները:

—Արտելի անդամների մեջ աշխատանքի արդյունքները նույնպես բաժանվում են նրանց պայմանագրի (կանոնադրության) համաձայն:

ՀՈԴ. 104. Ի՞նչպես ե վորոշվում արտելների մեջ նըրանց անդամների հողաբաժնի չափը:

—Այդ չափը վորոշվում ե կամ մշտական կերպով և կամ հողերի վերաբաժանության միջոցով:

ՀՈԴ. 105. Ի՞նչ ե անհրաժեշտ անել ընկերական հողոգտագործության նպատակով կոմմունա կամ արտել կազմելու համար:

—Կոմմունա կամ արտել հիմնելու համար հարկավոր ե կազմել՝

ա) Անդամների հիմնական պայմանագրի (համախոսական):

բ) Ընկերության գործերը վարելու կանոնադրություն:

գ) Հողի հատկացման մասին վորոշում:
Ցեղե ընկերությունը կազմվում ե ժամանակավոր կերպով, այդ դեպքում ինչ ե պահանջվում անել:

—Ժամանակավոր ընկերության համար հարկավոր ե միայն անդամների մեջ կնքել պայմանագրի (համախոսական), իսկ կանոնադրության և հողի հատկացման առանձին վորոշում չի պահանջվում:

ՀՈԴ. 106. Ի՞նչ պետք ե նշանակվի ընկերական հողոգտագործման ժամանակ անդամների հիմնական պայմանագրի մեջ:

—Ընկերության անդամների հիմնական պայմանագրի (համախոսականի) մեջ պետք ե նշանակվեն հետևյալ կետերը.—

ա) Ընկերության տեղը, անունն ու նպատակները:

բ) Ընկերության անդամների թիվն ու անուն—աղյօնունները.

գ) Ընկերության հողերի տարածությունը.

դ) Այդ հողերից ամեն մի անդամին հասնող բաժինը, յեթե այդ ուղում են վորոշել անդամները:

ՀՈԴ. 107. Ի՞նչ պետք ե անպայման նշանակվի ընկերական հողոգտագործության ժամանակ հողային հասարակության կանոնադրության մեջ:

—Ընկերության կանոնադրության մեջ, բացի նրա տեղից, անունից և նպատակներից, պետք ե անպայման նշանակվեն հետևյալ կետերը.—

ա) Նոր անդամներ ընդունելու և յեղածների հեռանալու կարգն ու պայմանները.

բ) Կարգ ու սարք ձեռք բերելու և ոպտագործելու յեղանակը.

գ) Անդամների աշխատանքի, մեջ տեղ դը-

ըած զույքի ընդհանրության (բոլոր անդամներին պատկանելու) չափը.

դ) Հողի հասարակական մշակության կարգը և անդամների աշխատանքներին մասնակցելու կանոնները.

յԵ) Ընկերության ուժեղով մշակվող հողից ստացվող արդյունքը բաշխելու կանոնները.

զ) Ընկերության միջոցներ և դրամագլուխ ստեղծելու յեղանակը.

ե) Ընկերության քանդվելու կարգը.

ը) Որենքին չհակասող ուրիշ կետեր ու պայմաններ, վոր ընկերության անդամները կարեն կը համարեն մտցնել կանոնադրության մեջ:

Ո՞վ պետք է մշակի և հրաարակի կոմմունաների ու արտելների կանոնադրություններ, վորպեսզի ցանկացողներն ոգտվեն նրանցից:

—Ընկերական հողոգտագործության անցնելու համար հողմուկոմատը պիտի մշակի և հրատարակի կոմմունաների ու արտելների համախոսականի և կանոնադրության որինակելի ձեռք:

ՀՈԴ. 108. Ի՞նչ իրավունք ունի պահանջելու ընկերության կազմից հեռացող անդամը:

—Ընկերության կազմից հեռացող անդամն իրավունք ունի յուր աշխատանքի և ընդհանուր գույքի դիմաց՝ պահանջելու յուր բաժնի արժեքը:

Իսկ ի՞նչ կարող է ընկերությունը պահանջել հեռացող անդամից:

—Ընկերությունը կարող է պահանջել հեռացող անդամից այն բոլոր վնասները, վոր կառաջանան անդամի հեռանալու պատճառով:

Ո՞վ է լուծում ընկերության անդամի հեռանալու հետեանքով տուաջացած վեճերը:

—Ընկերության կազմի և հեռացող անդամի

մեջ առաջացած վեճերը լուծում ե հողային հանձնաժողովը:

ՀՈԴ. 109. Ընկերական հողոգտագործությունը դադարելու դեպքում ինչպես են բաժանվում առանձին անդամների մեջ հողերը:

—Ընկերությունը դադարելու դեպքում հողերը բաժանվում են առանձին անդամների մեջ այնպես, ինչպես ցույց ե տրված ընկերության կանոնադրության մեջ:

Իսկ յեթե ընկերության կանոնադրության մեջ հողերի բաժանության մասին վոչ մի վորոշում չկա:

—Այդ գեոլոգում հարցը լուծվում ե Ընկերության ընդհանուր ժողովի կողմից:

Ընկերությունը դադարելուց հետո ումն են տրվում նրա հողերը, վոր հատկացված են յեղել պետության հողային գույքից:

—Ընկերությունը դադարելուց հետո այդ հողերն անմիջապես անցնում են հողային մարմինների արամադրության տակ:

ԳԼՈՒԽ ՅԵ.

ՀԱՍՄԱՆԱԿԱՆ ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀՈԴ. 110. Ի՞նչ բան է հողի հասարակական մշակությունը:

—Հողի հասարակական մշակությունն այն է, վոր հողոգտագործողները, միասին ոգտվելով ունեցած գործիքներից և միասին աշխատելով, հերկում, ցանում, հնձում և կալսում են, այսինքն՝ ըստ հողը մշակում են ամբողջ հասարակությամբ:

Ում վորոշումով կարելի յէ կատարել հողի հասարական մշակություն:

—Այդ կարելի յէ անել հասարակության ի-

բավագոր անդամների մեծամասնության վորումով:

Հողի հասարակական մշակությունը պետք է կատարել ծխերի բոլոր հողերի վրա:

— Վ. Հասարակական մշակություն կարելի յե կատարել հողային հասարակության հողերի նաև մի մասի վրա:

Հողոգտագործության վճր կարգի ժամանակ կարելի յե կատարել հողի հասարակական մշակություն:

— Բոլոր կարգերի ժամանակ, նույնիսկ ազարակներ ունեցողները կարող են հողերի մի մասը միացնել և հասարակական մշակություն կատարել:

ՀՈԴ. 111. Ի՞նչ պիտի անեն հողոգտագործողները հողի հասարակական մշակության անցնելու համար:

— Հողի հասարակական մշակության անցնելու համար հողոգտագործողները պետք է կազմեն կանոնադրություն և վորոշեն, թե ի՞նչ պայմաններով ե կատարվելու հասարակական մշակությունը:

Ում կողմից պետք է հաստատվեն այդ կանոնադրությունն ու պայմանները:

— Պետք է հաստատվեն և տոմարագրվեն գավառային գործկոմում:

ՀՈԴ. 112. Հասարակության անդամների մի մասը կամ նրա փոքրամասնությունն իրավունք ունի անցնելու հողի հասարակական մշակության:

— Այս. հասարակության անդամներն ամեն թվի տակ կարող են անցնել հողի հասարակական մշակության:

Այդ դեպքում ի՞նչպես ե լուծվում հողային հարցը:

— Այդ դեպքում հողի հասարակական մշակություն ցանկացողների համար ընդհանուր կա-

նոնների համաձայն՝ զատվում ե համապատասխան չափով հող:

Ի՞նչպես պիտի զատվեն հողերը կողմերի համար: — Հողերը պետք ե զատվեն այնպես, վոր կողմերի համար սկահպանվեն հողոգտագործման հարմարություններ:

ՀՈԴ. 113. Հողաշինարարության և հողաբաժանության ժամանակ ինչ արտօնություն են վայելում հասարակական մշակության տակ գտնվող հողերը:

— Հասարակական մշակության տակ յեղած հողերը հողաշինարարության և հողաբաժանության ժամանակ փոփոխության չեն յենթարկվում և չեն կրծատվում:

Իսկ յեթե այդ հողերն ավելի յեն վորոշված նորմաների չափից:

— Ավելի յեղած դեպքում ել հողերն անփոփոխ են մնում հասարակական մշակություն վարող հողոգտագործողների ձեռքին:

Ի՞նչու այդպիսի արտօնություն ե տրվում հասարակական մշակություն վարողներին:

— Այդ արտօնությունը տրվում ե այն պատճենով, վոր հողի հասարակական մշակությունը առանում է դեպի հողոգտագործման լավ ու զարգացած ձևերը:

ՀԱՏՎԱԾ VI

ՀԱՄԱՅՆԱԿԱՆ ԿԱՐԳՈՎ, ՀՈՂՈԴՏԱԳՈՐԾՈՒՄՆ ՈՒՆԵՑՈՂ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՈՂԵՐԻ ՎԵՐԱԲԱԺԱՆՈՒԹՅՈՒՆ,

ՀՈԴ. 114. Ում վորոշումով ե կատարվում հողերի վերաբաժանությունը համայնական հողոգտագործություն ունեցող հասարակությունների մեջ: — Կատարվում ե նույն հասարակության ընդ-

հանուր ժողովի վորոշումով։ Այդ վորոշման առթիվ պիտի կազմվի հատուկ համախոսական։
Համախոսականի մեջ ի՞նչ պետք է պարզված լինի։
— Հողերի վերաբաժանություն պահանջվող համախոսականի մեջ պետք է պարզված լինեն հետևյալ հարցերը։—

- ա) Հողի վիճ տեսքն ե բաժանվելու։
- բ) Ում վրա յե բաժանվելու հողը։
- գ) Ծխին վորքան հող ե տրվելու։
- դ) Քանի տարով ե բաժանվելու հողը։
- յե) Պահեստի հողեր մնալու յեն և ի՞նչպես են նրանք ոգտագործվելու։

ՀՊԴ. 115. Հողաբաժանության դեպքում ծխերի մեջ վորեն տարբերություն կարմղ ե լինել։

— Կհչ. հողաբաժանության ժամանակ բոլոր ծխերը հավասար իրավունքներ ունեն և նըրանց մեջ վոչ մի զանազանություն ու տարբերություն չի կարելի դնել։

ՀՊԴ. 116. Վեր հողերը չեն կարող բաժանվել հասարակության անդամների մեջ։

— Հասարակության անդամների մեջ բոլորովին բաժանվել չեն կարող դպրոցական ֆոնդի և պահեստի հողերը։

Ի՞նչպիսի հողեր են հողաբաժանության յենթարկվում։

— Հողաբաժանության յենթարկվում են այն հողերը, վորոնց վրա շենքեր, այգիներ, պարտեզներ և հողոգտագործողի ձեռքով ստեղծված ուրիշ արժեքներ չկան։

Իսկ ի՞նչ են լինում այն հողերը, վորոնց վրա շենքեր, այգիներ, պարտեզներ և ուրիշ արժեքներ կան։

— Շենքերով, այգիներով, պարտեզներով և ուրիշ արժեքներով ծածկված հողերը մնում են անփոփոխ ոգտագործողի ձեռքին։

Իսկ յեթե այգիներով, շենքերով և այլն արժեքներով

ծածկված հողերը շատ են հողոգտագործողին հասանելիք նորմայից։

— Այդ դեպքումն ել այգիներով, շենքերով և ուրիշ արժեքներով պատած հողերը մնում են ոգտագործողների ձեռքին առանց փոփոխության և առանց կրնատման։

Ինչու Հողային Որենսգիրքն այդպիսի արտննություն և սահմանել շենքերի և այգիների տերերի համար։

— Հողային Որենսգիրքն այդ արտննությունը սահմանել ե, վորապես աշխատավոր հողոգտագործողները խրախուսվեն, ավելի լավ շենքեր կառուցեն և ել ավելի հաջող ու ընդարձակ այգիներ ու պարտեզներ տնկեն։

Ուժն ե տրվում քանդված այգու կամ պարտեզի հողը։

— Քանդված այգու կամ պարտեզի հողը տրվում ե նախկին ոգտագործողին, յեթե նրան նորմայի չափով հող ե համառում. իսկ յեթե նախկին ոգտագործողը հողի պահանջ չունի, այդ դեպքում քանդված այգու կամ պարտեզի հողը տրվում ե ուրիշ սակավահող գյուղացու։

Հողային հասարակության սահմաններում կարմղ են այգի կամ պարտեզ ունենալ վոչ աշխատավոր հողոգտագործողները։

— Վոչ. աշխատավոր հողոգտագործողները հողային հասարակության սահմաններում իրավունք չունեն, ինչպես հող, նույնպես և այգի կամ պարտեզ ունենալու։

Ի՞նչ պիտի անեն աշխատավորական հողոգտագործության իրավունքը կորցրած քաղաքացիները մինչև խորհրդային հողաշինարարությունն ունեցած իրենց այգիները, պարտեզները, շենքերը և այլն։

— Նրանք հողային մարմինների թույլագությամբ պետք ե այգիները, պարտեզներն ու

շենքերը փոխանցեն աշխատավոր հողովտագործողների վրա:

Իրավունք ունեն փոխանցողներն ստանալու հատուցումն այդիների, պարտեզների և շենքերի համար:

Այս. փոխանցողներն իրավունք ունեն ստանալու այդիների ու պարտեզների բոլոր ծառերի ու տունկերի արժեքը, նույնպես և շենքերի արժեքը:

Կարմաղեն հողային մարմինները կատարել պահանջվող փոխանցումը:

Այս. կարող են փոխանցումը կատարել հողային մարմինները, յեթե նախկին տերերը նշանակած ժամանակին չկատարեն այդ:

Վերտեղ են քննվում նման դեպքերից առաջացած վեճերը:

Քննվում են հողային հանձնաժողովներում:

ՀՈԴ. 117. Հողաբաժանության ժամանակ ումը պիտի թողնել այն հողերը, վոր ոգտագործողները բարելավել են:

Բարելավված հողերը թողնվում են նախկին ոգտագործողների ձեռքին:

Իսկ յեթե այդ հնարավոր և ցանկալի չէ:

Այդ դեպքում բարելավված հողերը կարող են արվել ուրիշներին, միայն այդ ուրիշները պետք են վճարեն նախկին ոգտագործողին այն ծախսերը, վոր նա կատարել են, բայց փոխարենը դեռ չի ստացել հողից:

Ի՞նչն ե համարվում հողի բարելավվումը:

Հողի բարելավումն ե համարվում անջըրդի հողեր վոռոգելը, ճահճուանները չորացնելը, պատնեշելն ու պետքական հող պատրաստելը, անբերը հողերը լավ պարարտացնելը և այլն:

ՀՈԴ. 118. Յերբ ե հասարակության վորոշումը հողաբաժանության մասին իրագործվում:

Հասարակության վորոշումը հողաբաժանության մասին իրագործվում ե, յերբ հողաբաժանությունը հաստատվում և տոմարագրվում ե գավառակային գործկոմում:

Կարմաղեն գավառակային գործկոմը չհաստատել և չըտոմարագրել հողաբաժանությունը:

Այս. գավառակային գործկոմը չի հաստատի և չի տոմարագրի այն հողաբաժանությունը, վորով խախտվում են գոյություն ունեցող որենքներն ու հրահանգները և կամ թե չե խախտվում են առանձին հողոգտագործողների որինական իրավունքները:

Ի՞նչ պետք ե անի գավառակային գործկոմը հողաբաժանությունը չհաստատելու դեպքում:

Գավառակային գործկոմը պարտավոր ե ցույց տալ այն անկանոնություններն ու որենքների խատումները, վոր կատարված են հողաբաժանության մեջ:

Ի՞նչ պետք ե անի այդ դեպքում հողային հասարակությունը:

Հողային հասարակությունը պետք ե վերացնի բոլոր թերությունները և ուղղի բոլոր սխալները:

Մինչև այդ ամենը կատարվելը և նոր հողաբաժանության հաստատվելը, ում ձեռքին պիտի մնան գյուղի հողերը:

Մինչև նոր հողաբաժանության հաստատվելը գյուղի հողերը մնում են նախկին ոգտագործողների ձեռքին:

Ի՞նչ պիտի անել, յերբ հողաբաժանությունը հաստատվում ե ցանքով կատարելուց հետո:

Հողաբաժանությունը ցանքով կատարվելուց հետո հաստատվելու դեպքում հողամասերը նոր ոգտագործողի ձեռքն են անցնում բերքը հավաքելուց հետո:

Իսկ յեթե հողաբաժանությունից հետո ցանքսեր չըկան, բայց հերկած հողեր կան:

—Հերկած հողերը հողաբաժանությամբ ուշըշին արվելու ժամանակ հերկ անողը կամ ըստանում ե իրա աշխատանքի արժեքը և կամ այդ տարին հողամասը ցանում են հարաքաշ՝ (ընկերովի) տեղական սովորությունների համաձայն:

ՀՊԴ. 119. Քանի՞ տարին մի անգամ կարող ե հողերի վերաբաժանություն կատարվել:

—Հողաբաժանությունը կարող ե կատարվել 9 տարին մի անգամից վոչ շուտ:

ՀՊԴ. 120. Կարող ե վորոշված ժամանակից առաջ հողաբաժանություն կատարվել:

—Վորոշված ժամանակից առաջ կարող ե հողերի վերաբաժանություն կատարվել միայն այն դեպքում, յերբ հասարակությունն անցնում ե հողոգտագործման լավ ձևերի:

Ե՞ւ յերբ կարող ե ժամանակից առաջ հողաբաժանություն կատարվել:

—Նոր հողաբաժանություն կարող ե կատարվել այն դեպքում, յերբ հասարակության հողերի մի մասը պետական կարիքների համար կամ հողաշինարարության կարգով գրավվում ե:

Բացի այդ պատճառներից ուրիշ յերբ կարող ե ժամանակից առաջ հողաբաժանություն կատարվել:

—Այն ժամանակ, յերբ հասարակության ծխերի մի մասի հողերը զատվում են: Այդ բոլոր դեպքերում հողաբաժանությունը կատարվում ե սահմանված ժամանակից առաջ:

ՀՊԴ. 121. Մի հողաբաժանությունից մինչեւ մյուսը տեղող ժամանակի մեջ կարելի յե հողերի հավելումն ու կրճատում կատարել:

—Հողաբաժանությունից դուրս հողաբաժին-

ների հավելում ու կրճատում կարելի յե կատարել հողային հասարակության ընդհանուր ժողովի վորոշումով:

Ի՞նչ նպատակով են կատարվում այդ հավելումներն ու կրճատումները:

—Հողաբաժինների հավելումն ու կրճատումները կատարվում են հանգած ծխերի և պակասած անդամների հաշվին, նոր անդամներով ավելացած ծխերին բավարարելու նպատակով:

Ի՞նչ պետք ե շեշտված լինի հասարակության համախոսականի մեջ:

—Պետք ե անուն-անուն շեշտված լինի, թե վոր հողոգտագործողից, ինչքան հող ե կարվում և ուժն ե տրվում:

ՀՊԴ. 122. Հողաբաժինների հավելման ու կրճատման մասին հասարակության վորոշումը յերբ ե իրագործվում:

—Վորոշումն իրագործվում ե ընդհանուր ժողովի որից յերկու շաբաթ հետո, յեթե այդ ժամանակում վոչ վոք չե բողոքել վորոշումն դեմ: Իսկ յեթե բողոք կամ վորոշման դեմ:

—Բողոք յեղած դեպքում գործը քննվում ե հողային հանձնաժողովների կողմից և նրանց վերջնական վճռից հետո միայն հասարակության վորոշումն ի կատար ե ածվում:

ՀԱՏՎԱԾ VII

ՏՆԱՏԵՂԵՐ ՈՒ ՄԱՐԳԱԳԵՑԻՆՆԵՐ

ՀՊԴ. 123. Ի՞նչ իրավունք ունի ամեն մի ծուխ տեսաեղի նկատմամբ:

—Ամեն մի ծուխ իրավունք ունի ստանալու յուր համար տնատեղ: Ի՞նչ բան ե տնատեղը:

— Տնատեղը հողի այն տարածությունն ե, վորի վրա գտնվում են ծխի բնակարանը, գոմը, կալը, պարտեզը, մեղվանօցը և այլն:

Քանի տնատեղի ստանալու իրավունք ունի ծուխը:

— Ամեն մի ծուխ մի տնատեղի ստանալու իրավունք ունի:

Կարող ե ծուխը բնակարանի, գոմի ու պարտեղի համար ունենալ առանձին հողամաս, իսկ կալի, մարագի համար ել՝ առանձին:

— Այս. յեթե ծխին հատկացված տնատեղը փոքր ե, այդ դեպքում նրա կան ու մարագը կարող են լինել առանձին հողամասի վրա:

Վերտեղ պետք ե տրվեն ծխերին պահանջվող տնատեղերը:

— Պահանջվող տնատեղերը ծխերին պետք ե տրվեն գյուղի բնակատեղերի շրջանում:

ՀՈԴ. 124. Հողաբաժանության ժամանակ տնատեղերն ել կարելի յե բաշխման յենթարկել:

— Վ. անատեղերը բաշխման յենթակա չեն կարող լինել:

Իսկ կարելի յե տնատեղերի տարածությունը բոլոր ծխերի համար հավասարեցնել կրճատման կամ հավելման միջոցով:

— Վ. առանց ծխերի համաձայնության նրանց տնատեղերը կրճատման, հավասարեցման ու տեղահանության յենթակա լինել չեն կարող:

ՀՈԴ. 125. Ի՞նչպես պիտի վերաբերվել յերբ ծխերը հավասար չափով տնատեղեր չունեն:

— Մեծ կամ փոքր տնատեղերի հավասարեցումը պիտի կատարել ծխի ուրիշ հողերի հաշվին, պակասացնելով կամ ավելացնելով վարելանողը, խոտհարքը և այլն:

Ո՞վ պիտի վորոշի ծխերի տնատեղերի միջին տարածությունը,

— Տնատեղերի միջին չափը բոլոր ծխերի համար պիտի վորոշի հողային հասարակության ընդհանուր ժողովը:

Իրավունք ունեն պետական մարմինները սահմանելու վորոշ չափ տնատեղերի համար:

— Այս. գավառային գործկոմը, Հողժողկոմատի հաստատությամբ՝ կարող ե սահմանել տընատեղերի նվազագույն և առավելագույն չափ:

ՀՈԴ. 126. Հասարակությունն ինքը ի՞նչ իրավունք ունի անելու տնատեղերի կողմից ծխերին բավարելու համար:

— Հասարակությունն իրավունք ունի ուրիշ հողեր (վարելահող, խոտհարք, արոտ և այլն) միացնելու գյուղի բնակավայրերի շրջանին՝ փոքրը տնատեղերը մեծացնելու և նոր տնատեղեր ստեղծելու համար:

ՀՈԴ. 127. Ում իրավունքի տակ են մում այն ծըխերի տնատեղերը, վորոնք հողաշինարարության կարգով նոր շեն ու ադարակ են ստեղծում կամ գաղթում են ուրիշ վայր:

— Նոր շեն կամ ադարակ ստեղծողների և ուրիշ վայր գաղթողների տնատեղերը մինչև յերեք տարի կարող են մնալ այդ նույն ծխերի իրավունքի տակ:

Ի՞նչ ե լինում յերեք տարին լրանալուց հետո:

— Յերեք տարին լրանալուց հետո, տնատեղը մնում է հասարակության իրավունքին: Իսկ յեթե հեռացողը նախկին ծխի մի մասն ե, իսկ մացած մասը շարունակում ե մնալ հասարակության մեջ:

— Այդ դեպքում տնատեղն անցնում է ծխի մնացող մասի իրավունքին:

Ում իրավասությանն են անցնում հանգած ծխերի տնատեղերը:

— Հանգած ծխերի տնատեղերն անցնում են

Հողային հասարակության իրավասությանը:
Իսկ յեթե հանգած ծուխը վարել եւ ազարակային
տնտեսություն:

—Ազարակային տնտեսություն վարող ծու-
խը հանգչելու գեղքում, տնատեղը հողերի հետ
միասին անցնում եւ հողային մարմինների իրա-
վասությանը:

ՀՊԴ. 128. Ի՞նչ հիմունքներով եւ կատարվում խոտ-
հարքների բաշխումը:

—Խոտհարքների բաշխումն ևս կատարվում
եւ այնպէս, ինչպես վարելահողերն են բաժան-
վում:

Կարելի՞ յեւ հասարակության վարելահողերը բաժանել
շնչերի, իսկ խոտհարքներն՝ անասունների վրա:

—Վ. հ. վարելահողերն ու խոտհարքները
պետք եւ բաժանել նույն միավորների, այսինքն՝
շնչերի վրա:

ՀՊԴ. 129. Ո՞ւմն են արվում այն խոտհարքները, վո-
րոնք բարելավված են ոգտագործողների կողմից:

—Հողաշինարարության և հողաբաժանու-
թյան ժամանակ հատուկ աշխատանքի միջոցով
բարելավված խոտհարքները թողնվում են նույն
հասարակությունների ու ծխերի ոգտագործու-
թյանը:

Իսկ յեթե բարելավողի ձեռքին խոտհարքը թողնե-
լու հնարավորություն չկա:

—Այն ժամանակ նոր ստացողը վճարում եւ
կատարված այն ծախսերը, վորոնց փոխարեն գեռ
արդյունք չե ստացել բարելավողը:

ՀՊԴ. 130. Ի՞նչ կարգով կարող են փոփոխության յեն-
թարկել հասարակությունների և առանձնական տնտեսու-
թյունների խոտհարքների տարածությունն ու սահմանները:

—Հողային հասարակությունների և առանձ-
նական տնտեսությունների խոտհարքների տա-

րածությունն ու սահմանները կարող են փոփո-
խության յենթարկել միմիայն հողաշինարարա-
կան կարգով:

ՀՊԴ. 131. Յանկալի և ոգտակամը և խոտհարքների
ընդհարձակումն ու բարելավումը:

—Հանրավետության և հողոգտագործողնե-
րի համար խոտհարքների ընդհարձակումն ու բա-
րելավումը շատ ցանկալի և ոգտակամ բան ե.
ամենքը պիտի աշխատեն ու հոգան դրա մասին:

Ի՞նչ պիտի անի հողոգողկոմատը խոտհարքները բա-
րելավելու և ընդհարձակելու համար:

—Հողժողկոմատը պիտի հրատարակի պար-
տադիր վորոշումներ ու կանոններ հողոգտագոր-
ծողներին խրախուսելու և ստիպելու, վոր խոտ-
հարքները բարելավվեն ու ընդհարձակվեն:

Վերն եւ խոտհարքների բարելավումը:

—Խոտհարքների բարելավումն ե նրանց
ճահճուանները չորացնելը, անջրդի տարածու-
թյունները վորոգելը, քարերից մաքրելը, մերկ
տեղերը բուսականություն աճեցնելը, ճանա-
պարհներով ապահովելը և այլն:

ՀԱՏՎԱԾ VIII

ՀՈՂԵՐԻ ԶԱՏՈՒՄԸ

ՀՊԴ. 132. Իրավունք ունեն մեկ կամ մի քանի ծուխ
հրաժարվելու համայնական հողոգտագործությունից:

—Ամեն ժամանակ, թե մեկ ծուխ և թե մի
քանի ծխեր միասին իրավունք ունեն հրաժար-
վելու համայնական հողոգտագործությունից:

Ի՞նչպես են արվում համայնական հողոգտագործու-
թյունից հրաժարվող ծխերի հողերը:

—Համայնական հողոգտագործությունից հը-

բաժարվող ծխերի հողերը հասարակության հողերից զատվում և տրվում են առանձին և մի տեղում:

Ում համաձայնությունը պիտի ստանան բաժանվող ծխերը իրենց հողերն առանձին և մեկ տեղում ստանալու համար:

—Նրանք պետք ե ստանան այն հողային հասարակության համաձայնությունը, վորի կազմից դուրս են գալիս իրենք:

ՀՈԴ. 133. Յերբ կարող են ծխերը դուրս գալ հողային հասարակության կազմից և իրենց բաժին հողերն առանձնացնել՝ առանց հասարակության համաձայնության,

—Հողերի վերաբաժանության ժամանակ (9 տարին մի անգամ). Նույնիսկ հակառակ հասարակության ցանկության՝ ծխերն ամեն թվի տակ իրավունք ունեն դուրս գալու հասարակության կազմից և առանձնացնելու իրենց հողերը մեկ տեղում:

Ի՞նչպես ե վորոշվում մացողների և բաժանվողների հողաբաժնի չափը:

—Բաժանվող կողմերի հողերի չափը վորոշվում ե ընդհանուր կարգով և հասարակության մեջ ընդունված հողային նորմաներով:

Ի՞նչպես պիտի վարվել, յերբ հասարակության ձեռքին մացող և նրանից վերցնվող հողերը նույն տեսակի չեն:

—Տարբեր տեսակի հողեր զատելու ժամանակ պիտի հաշվի առնել նրանց համեմատական արժեքը:

Ի՞նչ նպատակ ունի հասարակությունից հողեր զատելն ու առանձնանալը:

—Հողերը զատելու և առանձնանալու նպատակն այն է, վոր հողոգտագործողը մոտ լինի յուր տնտեսությանը և ավելի լավ, խնամքով ու նեշտությամբ ոգոտագործի հողը:

Ի՞նչ կարգի հողոգտագործություն պիտի վարեն հասարակությունից հողերով միասին զատվող ծխերը:

—Զատվող ծխերն իրենց առանձնացած հողերի վրա կարող են սահմանել հողոգտագործման իրենց ուղած և ընտրած կարգը:

ՀՈԴ. 134. Զի՞ կարելի հասարակությունից բաժանվել և հողերը զատել նաև այն ժամանակ, յերբ հասարակությունը հողերի վերաբաժանություն չի կատարում և համաձայն ել չի այդ բաժանությանը:

—Հասարակությունից կարելի յե բաժանվել և հողերը զատել ամեն ժամանակ, յերբ բաժանվող ծխերի թիվը պակաս չե հասարակության բոլոր ծխերի 5-րդ մասից:

Քանի ծուխ միշտ իրավունք ունի հողերով զատվելու 250-ից ավելի ծուխ ունեցող հասարակությունից:

—250-ից ավելի ծուխ ունեցող հասարակությունից միշտ իրավունք ունեն իրենց բաժին հողերը զատելու, յերբ բաժանվել ցանկացող ծխերի թիվը 50-ից պակաս չե:

Եղ յերբ առանց հասարակության համաձայնության՝ ծխերը կարող են դուրս գալ հասարակության կազմից և առանձնացնել իրենց հողերը:

—Առանց հասարակության համաձայնության միշտ և ամեն թվի տակ ծխերը կարող են բաժանվել, յեթե նրանք զատվում ու հաստատվում են ամայի և առանձնացած հողաբաժինների վրա և յեթե այդ զատման պատճառով չի պահանջվում, վոր հասարակությունը ժամանակից առաջ հողերի վերաբաժանություն կատարի:

ՀՈԴ. 135. Զատման յուրաքանչյուր դեպքում հասարակությունն ի՞նչ ե վորոշում:

—Զատման յուրաքանչյուր դեպքում հասարակությունը վորոշում ե, թե քանի միավո-

ըի վրա պիտի բաժանվի հասարակության ամբողջ հողը:

ի՞նչ չափով են հող ստանում հասարակությունից գալու ծխերը:

— Հասաքակությունից զատվող ծխերը հող
են ստանում իրենց հող ստացող միավորների
(շնչերի) թվի համաձայն:

ԳՈՂ. 136. Հողեր գատելիս կարծի են հողային հարմարություններ ու առավելություններ ստեղծվել կողմից միայն մեկի համար:

—Վաչ. հողերի զատման ժամանակ, թե հասրակության մեջ մացողների և թե նրանից բաժանվողների համար պետք է ստեղծել ու պահել հողոգուագործման ամենից մեծ հարմարություններն ու առավելությունները:

Ի՞նչպես պիտի կատարել այդ:

— Այդ պիտի կատարել սահմանների անկանոնությունը, հողի ցրվածությունը, հեռավորությունն ու սեպաճեռությունը վերացնելով արտից, ջրից ու ճանապարհներից հեշտությամբ ոգտվելու հարմարություններ ստեղծելով և այլն:

Բնդիանը ապես ինչով պիտի զեկավարվել հողեր զա-
տելիս:

— Հողեր զատվելիս միշտ ալեաք ե զեկա-
վարվել հողաշինարարության պահանջներով:

ՀՈԴ. 137. ՅԵՐԵ Հի կարելի առանց հասարակության համաձայնության ժամանակից առաջ հողերի զատումն կատարել:

—Հողերի զատումն առանց հասարակության հանձնաժողովության՝ հանձնաժողովության՝ հողաբաժանությունից առաջ չի կարելի կատարել այն ժամանակ, յերբ հասարակությունը նոր և անցել հողոգտագործման այլ յեղանակի:

Եւ յերբ չի կարելի առանց հասարակության համա-

ձայնության հողերի անժամանակ զատումն կատարելու

— Մեկ ել այն ժամանակ, յերբ սահմանագած կարգով այդպիսի զատում արդեն մի անգամ կատարվել է:

ՀՈԴ. 138. Խ՞նչ կարգով ե քննվում ու լուծվում հողեսթի դատման հարցը:

— Հողերի զատման հարցը միշտ քննում և
լուծում ե հողային հասարակության ընդհանուր
ժողովը:

Ի՞նչպես ե իրագործվում հասարակության վորոշումը դատման մասին վեճ չլինելու դեպքում։

— Հողերի զատման մասին վեճ Ալիքելու
դեպքում հասարակության վսրոշումն ի կատար
ե ածվում գալիղդաժնում տոմարագրվելուց
հետո:

Ի՞նչ արագությամբ ե լուծում գավիռղբաժնինը իրեն
ներկայացված զատման գործերը:

—Այդպիսի գործերը գավհողբաժնը պետք
ե քննի և ընթացք տա 14 որվա ընթացքում:
Իսկ յեթե հողերի զատման մասին վեճ կա կողմերի
մեջ, առ ոեարում գործն ի՞նչպես և լուծվում:

—Հողերի զատման մասին կողմերի մեջ
վեճ լինելու դեպքում դժգոհ կողմը զիմում և
հողային հանձնաժողովին, վորի վերջնական վո-
րոշումը գավիտղբաժինը տուժարադրում և կյան-
քի մեջ իրադրում:

ՀԱՏՎԱԾ IX

ԱՇԽԱՏԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՏԱԳՈՐԾՄԱՆ ՀՈՂԵՐԻ ՀԱԴՏԱՏՈՒ-
ԹՅՈՒՆՆ ՈՒ ԿԱՐՔԱՎՈՐՈՒՄԸ

ՀՈԴ. 139. Հողային միավորների սահմանները
միշտ կարող են փոփոխության յենթարկվել թե վորոշ

ժամանակից սկսած նրանք հաստատվում են հողոգտագործողների վրա:

—Աշխատավորական հողոգտագործման հիմնական որենքը հրատարակվելու որից սկսած՝ գավառների, գավառակների, հասարակությունների և հողային այլ միավորների վրա մշտական ոգտագործության համար հաստատվում են այն հողերը, վոր հողային մարմինների կողմից տըրգած են նրանց հողաշինարարական կարգով:

Յերբ ե հրատարակվել աշխատավորական հողոգտագործման հիմնական որենքը:

—Աշխատավորական հողոգտագործման հիմնական որենքը հրատարակվել է 1922 թվի հունիսի 23. ին:

Ուրիշ ի՞նչ ե հարկավոր հողերը գյուղերի և ուրիշ միավորների վրա հաստատված ճանաչելու համար:

—Հարկավոր ե, վոր նրանց ոգտագործությունը լինի նաև փաստացի և անվիճելի:

ՀՊԴ. 140. Ի՞նչ չի կարող այլես կատարվել հիշյալ կարգով սահմանները հաստատված հողային հասարակությունների և այլ միավորների հողերի նկատմամբ:

—Այդպիսի հասարակությունների հողերը հարևանների հետ հավասարեցնել, ավելացնել ու պակասեցնել այլես չի կարելի:

Ի՞նչ նպատակով ե արգելվում հասարակությունների հողերի մշտական հավասարեցումը:

—Հասարակությունների հողերի հետագա հավասարեցումն ու փոփոխությունները արգելվում են այն նպատակով, վոր հողոգտագործողները համոզվեն իրենց տրված հողերը մշտական ե և ավելի լավ ու կանոնավոր մշտական ու խնամք տանեն նրա վրա:

Հաստատված հողերի սահմանները հարևանների հետ

հետագայում վոչ մի ժամանակ փոփոխության յենթարկվել չեն կարող:

—Կարող են միայն այն ժամանակ, յերբ իրենք՝ հողոգտագործողները կը խնդրեն վերացնել սահմանների անկանոնությունը, հողի սեպաձեւվությունը և անհարմարություններն ու դժվարությունները:

ՀՊԴ. 141. Ի՞նչ պիտի անեն հողային մարմիններն այն վայրերում, վորաեղ հողոգտագործությունները հաստատված են և նրանց մեջ բարգություններ այլևս չկան:


—Այդպիսի վայրերում հողային մարմինները սահմանված կարգով պետք ե ձևակերպեն, ցուցակներ կազմեն, հատակագծեր պատրաստեն և հաշվի առնեն ամեն մի հողային միավորի սահմանները, տարածությունը, հողի տեսքերը և այլն:

Այս բոլորը կատարելուց հետո հասարակությունները հողային մարմիններից ի՞նչ պահանջելու իրավունք ունեն:

—Հասարակությունները հողային մարմիններից կարող են իրենց վրա հաստատված սահմանների համար պահանջել վերջնական հատկացման թերթեր և հատակագծեր:

Հատկացման թերթերն ու հատակագծերը հասարակություններին տրվում են ձրիտբար, թե վորոշ վարձով:

—Հաստատված հողերի համար հաստատման թերթեր ու հատակագծեր հասարակություններին տրվում են Հողժոկոմատի կողմից հաստատված վճարը գանձելուց հետո:



2289

14355

2013



